




ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Հոդվածների ժողովածու

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ

Հոգվածների ժողովածու

Երևան
Լուսակն
2024

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Հ)

Ս 411

**Ժողովածուն տպագրության է երաշխավորել
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Բանասիրական
ֆակուլտետի խորհուրդը**

Խմբագիր՝ Մայա Գրիգորյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն

Պարույր Սևակ: Հոդվածների ժողովածու.- Երևան: Լուսակն,

Ս 411 2024.- 90 էջ:

Ժողովածուում ամփոփված են Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի, նաև Բանասիրական ֆակուլտետի մի քանի դասախոսների գիտական հոդվածները՝ նվիրված Պարույր Սևակի ստեղծագործության մի շարք խնդիրներին:

Ժողովածուն օգտակար է Բանասիրական ֆակուլտետների ուսանողության, հայ գրականության ուսուցիչների, Պարույր Սևակի պոեզիան բարձր գնահատողների համար:

ՀՏԴ 821.19.0

ԳՄԴ 83.3(5Հ)

ISBN 978-9939-968-44-5

© Լուսակն, 2024

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՆՎԻՐՎՈՒՄ Է
ՄԵԾԱՆՈՒՆ ԲԱՆԱՍՏԵՂԾ
ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ
ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

1959 թ., երբ լույս տեսավ Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» հրաշք պոեմը, հայ բանաստեղծության դարավոր զանձարանը հարստացավ ևս մի անմահ գործով: Հանճարեղ Կոմիտասին Սևակը հավերժացրեց հանճարեղորեն:

Պարույր Սևակը նորարար էր. նա շրջադարձ կատարեց հայ բանաստեղծական խոսքի մեջ: Մեծ հայրենասեր, բազմակողմանի զարգացած, իր գործի նկատմամբ խստապահանջ՝ նա իր ստեղծագործությամբ Եղիշե Չարենցի պես կարողացավ ասել. «Ես եմ դոֆին Նաիրյան»: Նա դարձավ հայ բանաստեղծության այն նոր արքայազնը, որն իրավունք ուներ գրավելու բանաստեղծության գահը:

Քաղաքացիական արիությունը, բանաստեղծական նորամուծությունները, ծանոթությունը հայ և համաշխարհային գրականության զանձերին նրա աստվածատուր ներշնչման առաջ բացեցին նոր հորիզոններ: Սևակը գիտեր հայ ժողովրդի անցած դժվարին ուղին, նրա մաքառումները, ձեռքբերումներն ու հնարավորությունները: Իր քնարերգությամբ, հրապարակախոսությամբ, գրականագիտական ու գրաքննադատական հոդվածներով նա հավասարի իրավունքով կանգնեց իր ժամանակի առաջադեմ ազգերի նշանավորների կողքին:

Քաջատեղյակ իր ազգի ու մարդկության անցյալին՝ Սևակը միշտ նայում էր առաջ: Նա «Սայաթ-Նովա» մենագրության մեջ հանճարեղ Սայաթ-Նովային ներկայացրեց համամարդկային գրականության ու մարդկային մտքի ձեռքբերումների տեսադաշտի վրա: Սայաթ-Նովան կանգնեց իտալական Բարձր Վերածնության մեծերի կողքին՝ իր բազմաօժտվածությամբ:

Սևակի «Մարդը ափի մեջ» ժողովածուի ասելիքում հայտնվեցին մտքեր, որոնք դարձան թևավոր խոսքեր: Սևակը ստեղծեց բանաստեղծական մի դպրոց, որ ունեցավ բազում հետևորդներ:

Այս ժողովածուն հարգանքի տուրք է՝ ուղղված հայ մեծ բանաստեղծին, որը նաև հայ միջնադարյան գրականության մեծ գիտակ էր ու պահապան:

Պրոֆեսոր Աեխտա Դոլուխանյան

ПРЕДИСЛОВИЕ

С выходом в свет в 1959 г. прекрасной поэмы Паруйра Севака «Неумолкаемая колокольня» насчитывающая века сокровищница армянской поэзии пополнилась еще одним бессмертным произведением. Паруйр Севак гениальным образом увековечил гений Комитаса.

П. Севак был новатором, проложившим новую веху в армянской поэзии. Будучи великим патриотом, разносторонне образованной и взыскательной к себе личностью, Севак, подобно Егише Чаренцу, мог сказать о себе «Я дофин Наирийский». Он стал тем новым дофином армянской поэзии, который имел право взойти на трон поэзии.

Гражданская смелость, поэтические новаторства, высокая эрудиция открыли новые горизонты перед его богоданным талантом. Севак обладал блестящими знаниями в истории, в частности, истории своего народа, его борьбы и завоеваний. Творческая многогранность поэта (лирика, публицистика, литературоведческие и литературно-критические статьи) поставили его в один ряд с выдающимися представителями передовых наций его эпохи.

В монографии «Саят-Нова» он представил великого армянского поэта в контексте всемирной литературы и завоеваний человеческой мысли. Саят-Нова благодаря своему таланту занял свою нишу среди ключевых фигур итальянского Возрождения.

Многие образцы поэтической мысли П. Севака из сборника «Человек на ладони» стали афоризмами. Им была создана поэтическая школа, у которой было много последователей.

Данный сборник является данью уважения памяти великого армянского поэта и блестящего знатока армянской средневековой литературы.

Профессор Аэлита Долуханян

FOREWORD

With the publication in 1959 of Paruyr Sevak's gorgeous poem "The Incessant Bell Tower", the centuries-old treasury of the Armenian poetry was enriched with another immortal work. Paruyr Sevak immortalized the genius of Komitas in a brilliant way.

P. Sevak was an innovator who set a new milestone in the Armenian poetry. Being a great patriot, a versatile educated and demanding to himself person, Sevak, like Yeghishe Charents, could say about himself "I am the Dauphin of Nairi." He became the new Dauphin of Armenian poetry, who had the right to ascend to the throne of poetry.

Civic courage, poetic innovation, and high erudition opened new horizons for his heaven-sent talent. Sevak had brilliant knowledge of history, in particular, the history of his people, their struggles and conquests. The poet's creative versatility (lyricism, journalism, literary studies and literary criticism) placed him on a par with the outstanding representatives of the progressive nations of his era.

In the monograph "Sayat-Nova" he presented the great Armenian poet in the context of world literature and the achievements of human thought. Thanks to his talent, Sayat-Nova found his niche among the main figures of the Italian Renaissance.

Many phrases of P. Sevak's poetic thought from the collection "Man in a Palm" became aphorisms. He created a poetic school that had many followers.

This collection is a tribute to the memory of the great Armenian poet and a brilliant connoisseur on the Armenian medieval literature.

Professor Aelita Dolukhanyan



ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԸ

ԳՐԱԿԱՆԱԳԵՏ ԵՎ ԳՐԱՔՆՆԱԴԱՏ

(ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ)

Ներածություն

1945 թ. Պարույր Սևակը ընդունվել է ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայոց հին գրականություն մասնագիտությամբ¹: 1967 թ. «Մայաթ-Նովա» թեմայով պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, սակայն մասնագիտացված խորհրդի որոշմամբ ստացել է դոկտորի աստիճան: Նրա ատենախոսության ընդդիմախոսներից մեկը եղել է եզակի ու անկրկնելի սայաթնովագետ Մորուս Հասրաթյանը, ով պաշտպանության ժամանակ ասել է. «Տաղանդավոր բանաստեղծի՝ վաղուց անվիճելի ճանաչում գտած գիտական կարողությունները, պատմագիտական և գրական-բանասիրական խոր գիտելիքներն ու լայն ընդգրկումը, լեզվական ու հրապարակախոսական բացառիկ տաղանդը, սուր մտքի փայլը, տեսնելու և շատերիս համար անսովորը զգալու և գնահատելու անօրինակ շնորհքը, տեսական-փիլիսոփայական բարձր պատրաստությունը և ընդհանրացումների կարողությունը նրան

¹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ.1, Երևան, 1972, էջ V:

դնում են այն երջանիկ անհատների շարքին, որոնց պարտավոր ենք բոլորս խղճի մտոք ընդունել, գնահատել և բարձրաձայն հայտարարել այդ մասին»²:

Սևակից մեզ են հասել բազմաքանակ գրականագիտական ու գրաքննադատական հոդվածներ, որոնք վերաբերում են հայ նոր գրականության դասականներին, իր ժամանակակիցներին, համաշխարհային գրականությանը: Դրանց մեջ առանձնացնում են հայ միջնադարյան գրականությանը, Մեսրոպ Մաշտոցին, հայ ժողովրդական բանահյուսությանը նվիրված գրականագիտական ու գրաքննադատական հոդվածները, որոնք լիովին տարբերվում են նույն հեղինակների կատարածին տրված արձագանքներից:

Միջնադարի հայ գրականության գիտակն ու գրաքննադատը

«Հանճարեղ սիրերգեր» հոդվածը տպագրվել է 1957 թ. օգոստոսի 25-ին «Գրական թերթում»: Այն Ավետիս Ղուկասյանի՝ նույն թվականին հրատարակած «Հայրենի կարգավ» խորագիրը կրող քուչակյան հայրենների ժողովածուի գրախոսությունն է: Հոդվածը բաղկացած է երկու մասից: Առաջին հատվածում Նահապետ Քուչակի հայրենների՝ հատկապես սիրո հայրենների մասին հիացական խոսքն է: Ընդգծենք հոդվածի մի հատված. «Մի խարույկ է այս գիրքը՝ անթեղված մեսրոպյան տառերի մեջ, խարույկ, որ բոցկտում է՝ ամեն վայրկյան փոխելով իր ձևը, բայց և միշտ մնում է ինքն իրեն հավատարիմ: Տաքացողներից ավելի խարույկ բորբոքողն ինքը գիտե իր գինը:

Ում որ կրակ պիտենա, գա տանի սրտես վառելու,

Ում թե որ քիչ պիտենա, շատ տանի գանձիկն էրելու»:³

Սևակը նշում է, թե շնորհակալ գործ է արել Ավ. Ղուկասյանը՝ խնամքով հավաքելով, կազմելով և հրատարակելով Նահապետ Քուչակի հայրենները:⁴

² Ա. Դոլուխանյան, Մորուս Հասարթյան: Ինքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, 2022, էջ 145:

³ Պ. Սևակ, Նշվ. աշխ., էջ 33:

⁴ Նույն տեղում, էջ 36:

Սակայն շնորհակալական խոսքից հետո սկսվում են գրանադատական դիտարկումները: Դրանց հիմքը անշուշտ հայտնի է եղել նաև Ավ. Ղուկասյանին: Հայ միջնադարյան գրականության երկու փայլուն գիտակները՝ Մանուկ Աբեղյանը և Արշակ Չոպանյանը, ապացուցել են, որ Քուչակի անվան տակ տպագրվել են տարբեր ժողովրդական տաղեր⁵: Նրանց գործը հետագայում շարունակել է նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացականյանը, որի «Հայրեններ» ծավալուն աշխատությունը (1095 մեծադիր էջ) Մաշտոցի անվան Մատենադարանը հետմահու հրատարակել է 1995 թ. (պատասխանատու խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Ս. Արևշատյան): 2007 թ. «Հայրեններ» թեմայով դոկտորական ատենախոսություն է պաշտպանել Վանո Եղիազարյանը⁶:

Ասատուր Մնացականյանը, Մ. Աբեղյանից հետո, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում գտել էր Քուչակ Նահապետի երգերը և դրանցից մեկը՝ «Տաղ ի վերայ Մոսկովու թագավորին», 1971 թ. տպագրել միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի հայ գրականության քրեստոմատիայում: Այն վերջանում էր հետևյալ հատվածով.

*Ես Քուչաքս եմ Վանեցի,
Բ գեղէն Խառակոնիսայ.
Լցեր եմ հարիւր տարին,
Էլ չի՛ գար մոքիկս ի վերայ.
Ով ինձ ողորմի ասի,
Ողջ կենայ իւր կենաց վերայ՝:*

Այս փաստերի հիման վրա Պարույր Սևակն իր հոդվածի երկրորդ մասում կատարել է գիտական ճշգրիտ դիտարկումներ, որոնք անտեսվել են «Հայրենի կարգավ» գրքի հրատարակչի կողմից: Առա-

⁵ Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940: Ա. Չոպանյան, հայրեններու բուրաստանը, Փարիզ, 1940:

⁶ Վ. Եղիազարյան, Հայրեններ, Վանաձոր, 2007:

⁷ Հայ գրականության քրեստոմատիա: Միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի համար, կազմ.՝ Ա. Շ. Մնացականյան, Երևան, 1970, էջ 178:

ջինը վերաբերում է հայրեն բառին, որը կապ ունի ոչ թե հայրենիք, այլ հայ բառի հետ: Դա հայկական տաղաչափություն է. այդ մասին մանրամասն խոսել է Մանուկ Աբեղյանը: Աբեղյանը հայրենների տաղաչափությունը տեսնում է արդեն Գրիգոր Նարեկացու տաղերում՝ այսինքն, տասներորդ դարում⁸:

Իրոք, Մաշտոցի անվան Մատենադարանի 13-րդ, 14-րդ և 15-րդ դարերի ձեռագրերում կան «Հայրենի կարգավ» գրքի մի շարք հայրեններ: Ինչպես կարող էին 16-րդ դարի հեղինակի գործերը հայտնվել մեկ-երկու դար առաջ: Մ. Աբեղյանը գրում է. «Աշուղ Քուչակի անունն, ուրեմն, այդ տիպի տաղերի վրայից պետք է ջնջել և այդ տաղերն անանուն թողնել, մինչև որ ապագայում դրանցից մեկի կամ մյուսի հեղինակը, գուցե, երևան գա, որովհետև ժողովրդական երգերն ևս սկզբնապես անհատ հեղինակների, հաճախ գուսանների և այլ երգիչների ստեղծագործություններ են, որոնք բերանացի ապրելով երկար ժամանակ՝ շարունակ վերամշակվում են և հեռանում սկզբնական ձևից, ու հեղինակը մոռացվում է: Բայց ո՞վ գիտե, կարող է պատահել, որ այդ տաղերից մի քանիսը շատ վաղ, նույնիսկ հեղինակի օրով, հեղինակի անունով գրված և բախտի բերումով, պահված լինեն հին ձեռագրերի մեջ»⁹: Մ. Աբեղյանի այս ելակետն էլ հիմք է դարձել Աս. Մնացականյանի համար՝ երկար տարիների հետազոտական ջանքերի շնորհիվ բացահայտելու, թե հայրեն համարված ու Քուչակին վերագրված քերթվածների մի մասն իրականում ո՞ւմ գործերն են:

Աս. Մնացականյանը «Հայրեններ» գրքի առանձին բաժնում ներկայացնում է հայրենների տաղաչափությամբ գրված բազում հատվածներ՝ Գրիգոր Նարեկացուց, Ֆրիկից, Խաչատուր Կեչառեցուց, Հովհաննես Թլկուրանցուց և շատ ուրիշներից:

Աս. Մնացականյանն իր գրքում զետեղել է 1295 թ. (13-րդ դար) գրված երեք հայրեն, որոնցից վերջինը կա նաև «Հայրենի կարգավ» գրքի խոհա-խրատական հայրեններ բաժնում¹⁰.

⁸ Մ. Աբեղյան, Երկեր, հտ. Բ, Երևան, 1967, էջ 34:

⁹ Նույն տեղում, էջ 23:

¹⁰ Հայրեններ, աշխատասիրությամբ Ա. Շ. Ասատրյանի, Երևան, 1995, էջ 472:

*Յորժամ կին տեսնում՝ ցանկամ,
Դըժոխոց դուռըն մոտենամ,
Երթամ յանապատ կենամ,
Ո՛չ տեսնում և ո՛չ ցանկանամ¹¹:*

Պ. Սևակին վշտացրել է, որ 1957 թ., երբ Մ. Աբեղյանը կենդանի չէր, Ավ. Ղուկասյանը նրան մեղադրում է «պատմականորեն չհիմնավորված սխալ տեսակետների մեջ»:

... Քուչակը վախճանվել է 1592 թ., Ֆրիկը՝ մոտ երկու դար առաջ: Եվ երկու դար առաջ Ֆրիկը բացականչում էր. «Ո՛ւր են քո ամեն բաներն, **հայրեն**, մասալ ու առակ». մեկ ուրիշ տեղ՝ «շատ մի **հայերեն բաներ** խորհուրդով դրախտ տնկեցի» (երկու դեպքում էլ «հայրենի» չափով գրված տաղերում)¹²:

1959 թ. սեպտեմբերի 11-ին «Գրական թերթում» լույս է տեսել Պ. Սևակի գրախոսությունը՝ նվիրված Մ. Հասրաթյանի Սայաթ-Նովայի խաղերի նոր հրատարակությանը: «Նորացած Սայաթ-Նովա» սևակյան գրախոսությունը մատնացույց է անում, թե Մ. Հասրաթյանը երբեք չի դադարել աշխատել Սայաթ-Նովայի ստեղծագործության վրա: Մա պատահական չէ: 1997 թ., երբ Հասրաթյանն արդեն կենդանի չէր, անգլիացի հայագետ Չարլզ Դաուսթոն իր “Sayat-Nova, An 18th century troubadour”¹³ սովորաձավալ աշխատության մեջ 70 անգամ հղում է անում Մ. Հասրաթյանի՝ 1963 թ. Երևանում լույս տեսած Սայաթ-Նովայի եռալեզու խաղերի առավել նորացված գրքին:

Սևակն այսպես է բնորոշում Սայաթ-Նովային. «Արևմուտքի բազմալեզու և բազմահարուստ գրականությանը ծանոթ չէ այնպիսի երևույթ, որպիսին Սայաթ-Նովան է: Միայն Արևելքի շրայլ բնության հմայքը կարող էր Հալեպից եկած պանդուխտ Կարապետի և հավլաբարցի Սառայի հարկի տակ՝ կիսաճորտ ընտանիքում ծնել մի սովո-

¹¹ Նույն տեղում:

¹² Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 5, էջ 38:

¹³ Ch. Dowsett, Sayat-Nova, An 18th century troubadour, Lovanii, 1997.

րական մանուկ, որ պիտի շատ բաներով դառնար արտասովոր և այդպիսին մնար դարերի մեջ»¹⁴:

Սևակի կարծիքով անհրաժեշտ է գիտական ու ջերմ գրախոսություններով գնահատել Մ. Հասրաթյանի բազմամյա աշխատանքը. «Բայց որ սայաթնովագիտությունը Մ. Հասրաթյանի ջանքերով բարձրացել է մի նոր աստիճանի, բայց որ Սայաթ-Նովայի շատ ու շատ էջեր վերծանված են առաջին անգամ, բազմաթիվ տողեր՝ վերջնականապես, - դրանում երկու կարծիք չի կարող լինել»¹⁵:

Պ. Սևակի ստեղծագործության գիտակները բազմիցս նշել են, որ նա խորապես ազդվել է հանճարեղ Գրիգոր Նարեկացուց: 1965 թ. բանաստեղծը «Հայրենիքի ձայն» թերթում, որը տարածվում էր ողջ սփյուռքահայության շրջանում, տպագրել է «Գրիգոր Նարեկացի» հիացական հոդվածը:

Աստվածային Գրիգոր Նարեկացուն Սևակը համեմատել է հորիզոնի հետ, որը մարդու համար մնում է միշտ անհաս ու անմատույց, երբեք չփոքրացող ու բացարձակվող¹⁶: Մ. Աբեղյանի պես նա հանճարի ծննդյան թվական մատնանշել է 10-րդ դարի 40-ական թվականները: Հայտնի է, որ Գրիգոր Նարեկացին թաղվել է Նարեկավանքում, ու այդ վանքը նույն արժեքն ունի, ինչ մեր բոլոր սրբավայրերից առաջիններից առաջինը՝ Օշականը...¹⁷ Որքա՞ն դիպուկ ու ճշգրիտ գնահատական հայ ժողովրդի սրբացված երկու հանճարներին, մեր ազգի հոգու և մտքի սթափությունը պահպանող երկու աստվածային մեծություններին:

Հին ու միջնադարյան գրականության յուրաքանչյուր անդրադարձի մեջ հիացմունք է պատճառում Սևակի պատմական խորաթափանցությունը: Գրիգոր Նարեկացին ապրել ու ստեղծագործել է Հայաստանի համար աննախադեպ 100-ամյա խաղաղության շրջանում: Ծաղկում էին երկու հայկական թագավորությունները՝ Բագրատունի-

¹⁴ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 40:

¹⁵ Նույն տեղում, էջ 43:

¹⁶ Նույն տեղում, էջ 243:

¹⁷ Նույն տեղում, էջ 244:

ներն ու Արծրունիները: Անին իր շենությամբ, ճոխությամբ, եզակի ճարտարապետությամբ դարձել էր տիեզերահռչակ: Մյուս կողմից, Գագիկ Արծրունու ջանքերով Աղթամարի ու Վասպուրականի ճարտարապետական գլուխգործոցները մրցակցում էին Անիի հետ:

Ահա թե ինչպես է նկարագրել Գագիկ Արծրունու շինարարական եռանդուն գործունեությունը մեր ժամանակների նշանավոր հայագետ Ժան-Պիեռ Մահեն. «904-ին Գագիկը դառնում է Արծրունիների տոհմի գլխավորը և անմիջապես վերակառուցում է Աստվածամոր եկեղեցին՝ զարդարելով սքանչելագործ խաղողով և թանկարժեք անոթներով: Նա Վանը դարձնում է թագավորության մայրաքաղաքը: Միջնաբերդի գագաթին՝ ուրարտական հնությունների վայրում, փորում է ստորգետնյա Սուրբ Գևորգ եկեղեցին: Հյուսիսից՝ բլրի ստորոտում, կանգնեցնում է Երկնային Երուսաղեմի Սիոն եկեղեցին՝ Վանա լճի վրայով բերված Մանազկերտի քարից: Շքեղ շենքերի համար կառուցում է նաև ջրմուղ՝ ջուրը բերելով Վարագա սարից»¹⁸:

Հայաստանում տնտեսության ու մշակույթի զարգացմանը զուգահեռ հասարակության մեջ խորացել էր բևեռացումը հարուստների և աղքատների միջև: Այս հակասության խորացումը նպաստել է թոնդրակյան աղանդավորական շարժման ձևավորմանը, որը երկիրը թուլացրել է ներսից: Սևակը բանաստեղծորեն է նկարագրել այս հակամարտությունը. «Դա դարն էր, Նարեկացու իր իսկ բառով ասած, ՀԱԿԱՄԻՏՈՒԹԵԱՆՅ: Դարը ծայրահեղությունների: Իսկ ծայրահեղությունները, ինչպես գիտենք, միանում են: Եվ հենց այդ միացման կետում էլ իբրև սահմանակցման ու սահմանաբաժանման մի հոյակապ ու վիթխարի խաչքար, հողից բուսնում ու երկինք է միտում Գրիգոր Նարեկացու ահարկու և աստվածատեսլական կերպարանքը»¹⁹:

Սևակը Նարեկացուն բնութագրող առաջին ածականը համարել է ԱՍՏՎԱԾՈՒՆՈՒՅԶԸ: Նարեկացին Աստծուն հետախուզել է ոչ թե ի սեր Աստծու, այլ հանուն Մարդու²⁰:

¹⁸ Ա. Դոլուխանյան, Ժան-Պիեռ Մահեն հայագետ, Երևան, 2020, էջ 139-140:

¹⁹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 245:

²⁰ Նույն տեղում, էջ 249:

Իդեալ, առաջինը մեզանում Սևակն է Նարեկացու Մատյանի հարցադրումները համեմատել Շեքսպիրի Համլետի բնութագրումների հետ. «Իրենից վեց դար հետո ծնված մեծ անգլիացու շնորհիվ աշխարհն ստացավ մարդու սքանչելի գովերգությունը՝ Համլետի բերանով»: Բացի այդ, Նարեկացու և Շեքսպիրի խոսքերի նույնականությունն ունեն միևնույն աղբյուրը՝ Սողոմոն Իմաստունի «Ժողովողը».

Շեքսպիր-«Համլետ»

*To be, or not to be-that is the question:
Whether' its nobler in the mind to suffer
The slings and arrows of outrageous fortune
Or to take arms against a sea troubles
And by opposing end them. To die, to sleep-
No more- and by a sleep to say we end.²¹*

Գր. Նարեկացի - «Մատեն»

*Ավելի լավ չէ՞ր, ինչպես որ Գիրքն է ասել նախօրոք,
Ո՛չ սաղմնավորվել բնավ արգանդում,
Ո՛չ ձևավորվել որովայնի մեջ,
Ո՛չ ծնունդ առնել, ո՛չ լույս աշխարհ գալ,
Ո՛չ մարդկանց թվում երբևէ գրվել,
Ո՛չ հասակ առնել, աճել, զարգանալ,
Ո՛չ գեղապատկեր դեմքով զարդարվել,
Ո՛չ օժտվել խոսքով, բանականությամբ,
Քան թե ենթարկվել այսքան սաստկագույն
Ու սարսափելի տառապանքների,
Որոնց դիմանալ կարծրակրփ ժայռերն անգամ
չեն կարող,
Ո՞ր մնաց տկար մարմինները լույծ²²:*

²¹ W. Shakespeare, Hamlet Prince of Denmark, New York, 1983, p. 89.

²² Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, թարգմ.՝ Վ. Գևորգյանի, Երևան, 1979, էջ 29-30:

Ժողովող

*Ունայնություն ունայնությանց,
ասաց Ժողովողը, - ունայնություն
ունայնությանց, ամեն ինչ ունայն է:
Ի՞նչ օգուտ ունի մարդ իր ողջ
չարչարանքից, որ չարչարվում է
արեգակի ներքո՞²³:*

Սևակը Գրիգոր Նարեկացուն համարում է երգիչը չծերացող Ոգու «...և այդ բնագավառում չունի զույգ ու մրցակից՝ ոչ միայն իր ժամանակի մեջ և ոչ էլ միայն իր ազգակիցների»²⁴:

Նկատենք, որ Գրիգոր Նարեկացու մահվանից քսան տարի անց բյուզանդական գրականության մեջ հանդես է եկել միստիկ Սիմեոն Նոր Աստվածաբանը, որի հիմները զարմանալի ձևով հիշեցնում են Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը: Սիմեոն նոր Աստվածաբանն էլ իր հիմներում շարունակ դիմում է Աստծուն, նա էլ խոսում է ոչ միայն իր, այլև համայն մարդկության անունից.

*Բայց և այսպես ես հիմա կասեմ բոլորին,
Այն ինչ դու իրավունք ես տվել ասելու,
Օ՜ մարդկային ողջ ցեղ՝
Թագավորներ և իշխաններ,
Հարուստներ և աղքատներ,
Հոգևորականներ և աշխարհիկներ
Եվ բոլորը, ովքեր խոսում են երկրի վրա,
Լսեք հիմա ինձ՝
Մարդկանց համար պատմելու
Աստծու սիրո մեծությունը՞²⁵:*

²³ Ժողովող-1-2, 3:

²⁴ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 251:

²⁵ Syméon le Nouveau Théologien, Hymnes, t. 2, Paris, 1971, p. 317.

Նարեկացու տաղերով սքանչացած՝ Սևակը դրանք համարում է շարունակությունը շարականների՝ ըստ ժամանակի, բայց դրանց ժխտումը՝ ըստ էության: Դրանցում նա տեսնում է վաղ Վերածննդի դրսևորումներ: Հոգևորը ներկայանում է բնության շքեղ տեսարաններով, իսկ Աստվածամայրը թվում է, թե Սողոմոնի Սուլամիթան է: Սա բացարձակ ճշմարտություն է: «Երգ երգոցի» մեկնության մեջ Նարեկացին ունի հետևյալ մշտապես ճշմարիտ նկատումը. «Արդ չկա երկրի վրա առավել պատվական բան, քան տղամարդու և կնոջ սերը»²⁶: Միստիկների աշխարհայեցման վերաբերյալ դիպուկ բնութագիր ունի Վ. Խվոստովն իր “Очерк истории этических учений” գրքում: Միստիկների սիրելի գիրքը «Երգ երգոցն» էր, որի մասին շատ միստիկներ գրում են մեկնություններ²⁷:

Շատ տպավորիչ է Սևակի այն եզրահանգումը, թե միայն մի քանի տաղով Նարեկացին կդառնար մեր առաջին մեծ բանաստեղծը: «Բայց նա կերտեց նաև իր «Մատյանը», որը մեր բանաստեղծության Աղթամարա վանքն է՝ լոկ այն զանազանությամբ, որ «Մատյանն» անկործանելի է ստուգապես»²⁸:

Սևակն ուներ Մաշտոցի պաշտամունքը՝ վկան նրա «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» հանճարեղ պոեմը: «Թրի դեմ՝ գրիչ» հոդվածը նվիրված է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին նվիրված հոբելյանին: Հետագայում տպագրվել է թե՛ Երևանում, թե՛ Ալեքսանդրիայում: Հոդվածն ունի երկրորդ վերնագիրը՝ «Մաշտոցի սիրագործությունը»: Մաշտոցը Հայոց այբուբենի գյուտի կարևորությունը լիովին տարբերակում է այլ ժողովուրդների տառեր ստեղծելու պատմությունից: Հայոց այբուբենը հայ ժողովրդի լինել-չլինելու բախտորոշիչ ու դժնդակ պահին հայտնվեց ու ազդարարեց՝ լինել:

Սևակը իսկական մարգարե է, երբ քրիստոնեության պատմական վտանգներն է տեսնում և ասում, թե չորրորդ դարում Հռոմի և

²⁶ Մատենագիրք Հայոց, հտ. ԺԲ. Ժ դար, Գրիգոր Նարեկացի, Երևան, 2011, էջ 766:

²⁷ В. Хвостов, Очерк истории этических учений, Москва, 1912, с. 73.

²⁸ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 246:

Բյուզանդիայի համար «երկնային արքայությունը փաստորեն երկրային իմպերիա էր»²⁹: Ահա այդ ամենակուլ իմպերիայից հայոց եկեղեցին փրկվեց՝ ընդունելով քրիստոնեության իր տեսակը, Հիսուսի մեկ բնություն, միայն Աստված լինելը:

Հայերը 451 թ. Քաղկեդոնում, որը XX դարի Պոլսի թաղերից մեկն է, չմասնակցեցին տիեզերական համաքրիստոնեական ժողովին: Այդ ժողովն էլ իր հերթին նոր Ավարայր էր պատրաստում հայերի համար:

Սևակն էլ, Դ. Դեմիրճյանի նման, 451 թ. Ավարայրի ճակատամարտի ելքը համարում է հաղթանակը. «Մերոնք Ավարայրում չհաղթեցին, բայց նաև չպարտվեցին, որ արդեն հաղթանակ էր և մեծ հաղթանակ: Պարսկաստանը ստիպված եղավ Հայաստանից ետ կանչել իր Ջրաղաշտին, և հայը մնաց քրիստոնյա»³⁰: Սևակը պատմական իրատեսությամբ բացատրում է, թե ինչու Տրդատ Մեծը որոշեց թողնել հեթանոսությունը և ընդունել այնքան հալածական նոր կրոնը՝ քրիստոնեությունը:

Հայոց գրերի ստեղծումով Մաշտոցը կանխեց Հայաստանի կատարյալ գաղութացումը:³¹ Հայ գրերի գյուտարարի ծննդյան 1600-ամյակի առթիվ մեծ հոգվածով հանդես է եկել նշանավոր պատմաբան Մ. Հասրաթյանը: Նա բացատրում է, թե ինչու պարսից արքունիքը թագավորի պաշտոնից հեռացրեց Խոսրով Երրորդին նրա հունասիրության համար ու փոխարենը արքա նշանակեց Վռամշապուհին: Պարսիկները պալատից հեռացնում են նաև Խոսրովի մերձավորներին. «Հունական կրթություն ստացած Մաշտոցին նրանք չէին կարող հանդուրժել նոր դրածոյի պալատում՝ Մաշտոցին համարելով Խոսրովի մերձավոր, նրա քաղաքականության հետևորդ»³²: Մ. Հասրաթյանի կարծիքով Մաշտոցի մեծությունը հենց այն է, որ պալատի երիտա-

²⁹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 168:

³⁰ Նույն տեղում, էջ 169:

³¹ Նույն տեղում, էջ 173:

³² Մ. Հասրաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 34:

սարդ զինվորականը, կրթված անհատը մի բևեռից անցնում է մյուսին, դառնում հոգևորական՝ այդ ձևով պահպանելով իր կարևորությունը երկրի քաղաքական կյանքում³³։ Մաշտոցին նվիրված իր գեկուցումը Սևակը հարստացնում է «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմի իր ասելիքը հաստատող մեջբերումներով։

Սևակի հետևյալ եզրահանգումը Մաշտոցի պատմական դերի մասին պետք է գիտակցի ամեն հայ՝ այսօրվա և հետագայի. «Ահա թե ինչու Մաշտոցն է իսկական հեղինակն ու կազմակերպիչը մեր քաղաքական պայքարի երկու բախտորոշ հաղթանակների՝ ոչ միայն գրերի գյուտի, որի շարունակությունն էր Ավարայրը, այլ նաև Դվինի ժողովի, որ պիտի Քաղկեդոնին ասեր՝ «Ո՛չ»։ Ահա թե ինչու Մեսրոպն է մեր մեծագույն և անբաղդատելի քաղաքագետը»³⁴։ Մաշտոցը հիանալի գիտեր հունարենը, ասորերենը, պարսկերենը, նաև ուրիշ լեզուներ։ Սևակն ասում է, որ նա կարող էր ընտրել վերոհիշյալ երեք լեզուներից որևէ մեկի այբուբենը ու հարմարեցնել հայերենին։ Մաշտոցը հասկացավ, որ երկու հզոր պետականությունների միջև գտնվող Հայաստանը իրավունք չունի լինելու նրանց տառերի հետևորդը, այլ պետք է ունենա սեփականը՝ «շեշտելով իր տարբերությունը և ոչ թե գլխագրելով նմանությունները»³⁵։ Սևակը շեշտում է, թե Մաշտոցը ստեղծել է բոլորովին նոր այբուբեն, որը նման չէր աշխարհի որևէ այբուբենի. «Այսպես կարող էր գործել ո՛չ սոսկ տառաստեղծը, ո՛չ էլ մեծ լեզվաբանն անգամ. այսպես կարող էր գործել միայն մեծ քաղաքագետը»³⁶։

Սևակի «Հայոց ավանդապատումը» գրախոսությունը նվիրված է տաղանդաշատ բանագետ Արամ Դանալանյանի «Ավանդապատում» աշխատությանը. այն տպագրվել է «Գրական թերթում» 1970 թ. հունվարի 18-ին։ Սևակն Ա. Դանալանյանի նոր գիրքը համարում է թանկ նվեր, որը կազմված է 740 մեծադիր էջից։ Գիրքը նաև խորագրի ձևային առումով համեմատվում է այնպիսի նշանավոր գրքերի հետ՝

³³ Նույն տեղում, էջ 35։

³⁴ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 179։

³⁵ Նույն տեղում, էջ 181։

³⁶ Նույն տեղում, էջ 183։

ինչպիսիք են Ղևոնդ Ալիշանի «Հայապատումը» և Մադաթիա Օրմանյանի «Ազգապատումը»:

Սևակը հատուկ ջերմությամբ է խոսում Ա. Ղանալանյանի բանագիտական գրքերի մասին, որոնք հայ բանագիտության մեջ եղել են նորություններ: Դեռ երիտասարդ տարիներին նա տպագրեց «Հայ շինականի աշխատանքային երգերը»: Սևակն Ա. Ղանալանյանին համարում է մեծն Մանուկ Աբեղյանի գործի շարունակողը՝ լինելով նաև նրա աշակերտը: Հայ ժողովրդի մտավոր կյանքը Ա. Ղանալանյանը հարստացրել է հայ դարավոր իմաստախոսություններն իրենց մեջ ամփարած «Առածանի» ժողովածուի երկու հրատարակություններով. «Էլ ի՞նչ ժողովուրդ (և այն էլ հինավուրց ժողովուրդ), որ չունի իր առածների և ասացվածքների համահավաք ժողովածուն»³⁷:

Գրքում ավանդությունները տարբերակված են ավանդագրույցներից: Տարբերակված են ավանդությունների տեսակները՝ կան ստուգաբանական և բացատրական ավանդություններ, ինչպես նաև վարքաբանական ավանդագրույցներ: Սևակը ներկայացնում է գրքի գիտական ու տեխնիկական բաժանումների նպատակաուղղվածությունը: Ըստ բովանդակության՝ կատարված է ճշգրիտ բաժանում: Բաժիններից են՝ բնաշխարհի և հավատալիքներ, ներքին կյանք, այլազգի բռնակալներ և հայրենի հերոսներ ու նահատակներ, մշակութային գործիչներ: Հատկապես ուշագրավ են տարբեր ազգերի՝ հայկական, կովկասյան, հունական, շումերաբաբելական, աֆրիկյան, հյուսիս-ամերիկյան ավանդությունները ջրհեղեղի մասին: Շղթայված կամ արգելափակված դյուցազունների ավանդությունները՝ ըստ հայկական, վրացական, հունական, իրանական, սերբական, գերմանական փաստերով: Նույնքան հետաքրքիր են զանազան շինությունների շարվածքի մեջ կենդանի թաղված զոհի ավանդությունները՝ ըստ հայկական, վրացական, բուլղարական, սերբական, ռումինական, գերմանական, դանիական, իտալական տարբերակների³⁸:

³⁷ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 380:

³⁸ Պ. Սևակ, Երկերի ժողովածու, հտ. 5, էջ 385:

«Ավանդապատում» գրքի վրա Ա. Ղանալանյանն աշխատել է երկար տարիներ, զանազան աղբյուրներից հավաքելով փաստեր, ըստ որում նյութերի մի մասը գրառել է գիտնական-բանահավաքը երկար տարիների ընթացքում:

Եզրակացություն

Պարույր Սևակը առաջնակարգ գրականագետ, գրաքննադատ է: Նրա հարուստ գրականագիտական ու գրաքննադատական ժառանգության մեջ առանձնակի տեղ են զբաղեցնում հայ բանագիտությանն ու հայ հին ու միջնադարյան գրականությանը նվիրված գեկուցումներն ու գրախոսականները: Դրանք պատմական լայն ընդգրկում ունեն: Եթե հայ ժողովրդական ավանդությունները, առածասացվածքները, հայ շինականի աշխատանքային երգերը գալիս են վաղնջական ժամանակներից, ապա հայ միջնադարի հեղինակները պատկանում են քրիստոնեական ժամանակներին:

Լինելով բազմագիտակ և համաշխարհային գրականությանը քաջատեղյակ՝ Սևակն ինքնատիպ ու ճշգրիտ գնահատականներ է տվել Մեսրոպ Մաշտոցի անձին և նրա ստեղծած այբուբենին: Նա հիմնավոր ձևով է բացատրում, թե ինչու Գրիգոր Նարեկացին իր «Մատենան ողբերգութեան» երկով հավասարի իրավունքով կանգնած է Վիլյամ Շեքսպիրի կողքին:

Հիմնավորում է, թե ինչու Մորուս Հասրաթյանը չգերազանցված սայաթնովագետ է, և հայ գրականագիտության այդ փաստը պետք է գիտահատվի ըստ արժանվույն:

Խոսում է Քուչակյան հայրենների հրաշք արվեստի մասին, միաժամանակ պաշտպանում Մանուկ Աբեղյանի ու Արշակ Չոպանյանի այն տեսակետը, որ դրանք հանճարեղ լինելով՝ տարբեր դարերի, տարբեր հեղինակների գործեր են, որ սիրված լինելով մտել են հայկական տարբեր ձեռագրերի մեջ՝ առանց հեղինակների անունների:

1970 թ. նա շատ բարձր է գնահատում մեծ բանագետ Արամ Ղանալանյանի «Ավանդապատում» աշխատությունը՝ շեշտելով վերջինիս գիտական նորությունն ու ճանաչողական մեծ արժեքը:



ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

*Խ. Արույանի անվան ՀՊՄՀ
Բանասիրական ֆակուլտետի դեկան,
Բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր*

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ «ԱՆՑՑԱԼԸ ՆԵՐԿԱՅԱՑԱԾ»

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Գեղարվեստական խոսքը գրական լեզվի զարկերակն է: Հայ գրականության դասական և ժամանակակից ներկայացուցիչների լեզվական արվեստի մասին բազում գործեր են գրվել: Եթե Պ. Սևակի չափածո խոսքը մանրակրկիտ քննության է ենթարկված, ապա հոդվածների, «Սայաթ-Նովա» մենագրության, «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրության բնագրերի լեզվական նորմերն ու խնդիրները քիչ են ուսումնասիրված:

«Անցյալը ներկայացած» ինքնակենսագրությունը գրվել է 1965թ. դեկտեմբերին: Ընդհանրապես ինքնակենսագրությունը գեղարվեստական վավերագրության ժանրատեսակ է, և ինչպես հուշագրությունը, իր մեջ ներառում է անցյալի հիշողության հոսքեր: Սակայն ինչպես նշում է Պ. Սևակը, «...վերհիշել անցյալը չի նշանակում տեղափոխվել անցյալ, այլ անցյալը տեղափոխել ներկա»¹:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ ժամանակաշրջանի գեղարվեստական վավերագրության բառային կազմի մեջ ընդհանուր համագործածական բառերին զուգահեռ գործածվում են

¹ Պ. Սևակ, Անցյալը ներկայացած, «Սովետական գրականություն», Երևան, 1989, թ. 1, էջ 129-133:

տարբեր բառամիավորներ, այսինքն՝ ինքնակենսագրության լեզվի ընդհանուր բառապաշարը ներառում է՝ ա) գրաբարյան, բ) բարբառային, գ) ժողովրդախոսակցական, դ) արևմտահայերեն ե) օտար բառեր և արտահայտություններ: Բառապաշարի հիշյալ շերտերում առանձնանում են բառային այն միավորները, որոնք կազմում են, պայմանականորեն ասված, հրապարակախոսական, վավերագրական բառիմաստային (թեմատիկ) խումբը: Նման խմբի առանձնացումն ունի որոշակի կարևորություն, ամենից առաջ տվյալ ժանրի լեզվական քննության տեսանկյունից:

Այսպես, ինքնակենսագրական բնագրերում, ճամփորդական տպավորություններում, հուշերում նշված բառաշերտերի գործածությունը պայմանավորված է ոչ միայն տվյալ միջավայրին համապատասխան երանգավորում ստեղծելու անհրաժեշտությամբ, այլ նաև տեքստի բովանդակությամբ և հեղինակի ոճի անհատականությամբ: Ճշգրիտ բառընտրությունը հեղինակների էական խնդիրներից է. այս պարագայում հուշագիրների հնարավորությունները անսահմանափակ են: Գրողը պիտի այնպես ընտրի բառը, որ Պ. Մևակի պատկերավոր արտահայտությամբ զգա նրա «կշիռն ու արժեքը, բառի գույնն ու երանգը, բառի համն ու հոտը, բառի ձայնն ու լռությունը»²:

Սևակը կարողացել է ոչ միայն հատուկ ընտրությամբ գործածել համապատասխան բառիմաստային խմբեր, այլ նաև ներկայացնել լեզվի բառակազմական լայն հնարավորությունները՝ ստեղծելով նորակազմ բառեր, խոսքաշարում դիտարկելով բառերի, դարձվածքների, խոսքին օժանդակող ճշգրիտ և դիպուկ կառույցներ, բառային տարբերակներ:

Գեղարվեստական վավերագրության հեղինակների խնդիրն է գործածել այնպիսի բառապաշար, որը կհամապատասխանի տվյալ ժանրատեսակի թեմատիկային, ոճական համակարգին և նկարագրվող «բնորդների» աշխարհայացքին ու գործունեությանը: Ինքնակենսագրական պատումը պետք է լինի հետաքրքրական և գրավիչ,

² Պ. Մևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 5, Երևան, 1974, էջ 356:

իրադրային, ընդգրկի անձնական կյանքի իրողություններ: Բառապաշարը, վերջիվերջո, պայմանավորվում է նաև այնպիսի գործոններով, ինչպիսին են ժամանակաշրջանը և պատկերվող միջավայրը: Բնագրում բառագուգորդությունների որոշակի պաշար է ստեղծված, այսպես՝ քաղցր հուշ, հուշերի երեկո, գեղեցիկ խոսք, անկեղծ խոսք, մուկովյան կյանք, անառողջ կյանք, գրական շուկա, գրական քաղաքականություն, անծանոթ քաղաք, առաջին տարիներ և այլն: *Առաջին հանդիպում, առաջին տարիներ* բառակապակցությունները բնորոշ են հենց այս ժանրի բնագրերին. «Մոսկովյան կյանքիս առաջին տարիները լցված էին նույն հոգեկան ճգնաժամով»:

Ըստ բառերի բաղադրիչների՝ առավել գործածական են բարդ կազմությունները՝ *ձեռագիր, սրտաշարժ, շքահանդես, գետնափոր, լեզվագուրկ, ագրոքաղաք, կեսգիշեր* և այլն:

Ինքնակենսագրության մեջ գործածված են օտար բառեր, բառակապակցություններ, որոնք առավել դիպուկ են դարձնում մեջբերումը, հուշային պատահիկը: «Հայ բազմադարյան գրականությունը կամաց-կամաց դադարեց terra incognita լինելուց»: «Մեր կուրսեցիք брoня-ի տակ եղան մինչև պատերազմի վերջը» և այլն:

Ինքնակենսագրության մեջ առկա են երկխոսության հոսքեր: Այստեղ կարևոր նշանակություն է ստանում խոսող-խոսակից-իրադրություն փոխհարաբերությունը:

Պ. Սևակի և մայրիկի միջև կայացած հայտնի երկխոսությունը այս բնագրում է հյուսված.

«-Էսքան որ կարդում ես, աչքերիդ մեռնեն, ի՞նչ պիտի դառնաս. վարժապե՞տ:

-Բա ի՞նչ,- պատասխանում էի ես:

-Ոնց որ էս բոլոր վարժապետնե՞րը:

-Բա ո՞նց:

-Էհ, կուրանամ ես, չե՛լա՛վ...

-Բա ի՞նչ կուզեիր, որ լինեմ:

Մայրս, ինչպես ասացի, անգրագետ էր: Նա, բնական է, չգիտեր ո՛չ «գրող», ո՛չ էլ «բանաստեղծ» բառերը: Բայց նա ակամա լսում էր իմ ու քրոջս բարձրաձայն ընթերցանությունը, ուստի և գիտեր, օրինակ, Գիքորի տխուր պատմությունը: Այն ժամանակ նա տակավին միտը չէր պահել նույնիսկ Հովհաննես Թումանյանի անունը: Ուստի և իմ «Բա ի՞նչ կուզեիր, որ լինեմ» հարցին պատասխանում էր.

- Էսքան որ կարդում ես, գոնե դառնայիր էն «Գիքորը» գրողի պես մարդ»:

Ինքնակենսագրության մեջ նկարագրական խոսքը հեղինակը հյուսում է՝ կիրառելով լեզվաոճական այնպիսի հատուկ հնարներ, որոնք ձևավորում են հուշագրական տեքստի դիմապատկերային միջուկը: Այս տեսանկյունից կարող ենք առանձնացնել կառուցվածքային միավորներ, բառաշերտեր, որոնք ընդգծում են՝ ա. մոր արտաքին հատկանիշները, բ. գործողություններն ու արարքները, գ. ուղղակի կամ անուղղակի խոսքը և այլն: Պ. Սևակը կերպարագծում է մայրիկի դիմանկարը արտաքին բարեմասնությունների հաշվառումով՝ երբեմն առանձնացնելով նրա դեմքը, ժպիտը, հայացքը, խոսելաձևը և այլն. «Ես՝ գաղտնիքս մեծ, ինքս փոքրիկ, արդեն վաղո՛ւց համոզված էի (ո՛չ թե երագում էի, այլ համոզվա՛ծ էի), որ դառնալու եմ «էն «Գիքորը» գրողի պես մարդ», այսինքն՝ գրող կամ բանաստեղծ: Բայց այդ մասին գիտեի լոկ ես ու մեկ էլ... Աստված: Եվ կյանքիս առաջին մեծ զարմանքն էր, թե որտեղի՞ց մայրս իմացավ այն, ինչ հայտնի է միայն Աստծուն: Այն ժամանակ ես չգիտեի, որ եթե բանաստեղծները Աստծու հետ ունեն միջնորդված առնչություն, ապա նրանց մայրերը Աստծուն հաղորդակից են անմիջապես...»:

Ինքնակենսագրության մեջ գործածված են թևավոր խոսքեր, իմաստախոսություններ, հայտնի ճշմարտություններ: Այսպես՝ «Հայերս առած ունենք. «Մեռածի ետևից՝ կա՛մ լավը, կամ ո՛չ մի բան»: «Առածն ասում է, որ «եթե ժամանակը սրտովդ չէ, դու ժամանակի սրտովը եղիր»: Այս առածի մեկ ուրիշ արյունակիցն էլ ձայնակցում է, թե՛ «որտեղ հաց՝ այնտեղ կաց»»: «Ինչո՞ւ»-ին կարող է պատասխանել

նաև ժողովուրդն իր առածով. «Մարդն իր չիմացած բանի թշնամին է»։ «Բանաստեղծը ներքին այրման շարժիչ է և ոչ թե ջրաղացի անիվ՝ օտար մի ուժով պտտվող»։ «Բոլոր ժամանակների հանճարը», երգվելով պատմության անվամբ, չէր հասկանում, որ անհնարին է կովել պատմության հետ»։ «Քառասուն ձոր, ամեն ձորում էլ քառասուն ձոր», «Շատ կարդալուց մարդկանց աչքերին կա՛մ սև ջուր է իջնում, կա՛մ խելքներն են թոցնում»։ Հայոց լեզվի խորությունը երևում է հետևյալ հատվածում. «...Եթե գրագետ լինելը դժվար է ընդհանրապես, ապա քառակի դժվար է գրագետ լինելը հայերենից, որովհետև հայոց լեզուն լավ իմանալ նշանակում է տիրապետել ... 4 գրական լեզվի (գրաբար, միջին հայերեն, արևմտահայերեն, արևելահայերեն)։ Իսկ եթե սրան էլ ավելացնենք, որ հայերենն ունի նաև 60 բարբառ, որոնցից շատերն իրարից ավելի են հեռու, քան ռուսերենը ուկրաիներենից, և որ իմ մայրենի բարբառը գրական հայերենին մոտիկ է նույնքան, որքան չեխերենը ռուսերենին, ապա կուրվագծվեն հայերենը տիրապետելու դժվարության մոտավոր սահմանները»։

Գրողի հանրագիտակ իմացությունը ստիպում էր օրինակներ քաղաբերել հին աշխարհից. «Հին Եգիպտոսում մի սովորույթ է եղել. սանդալի ներբանին նկարում էին թշնամուն, այսպիսով ամեն օր կոխկրտում էին նրա արժանապատվությունը։ Սանդալ ամեն ոք կարող է ունենալ, բայց ամեն մի արժանապատվություն գետնին չի փռվում, որ կոխկրտվի»։


Համեմատությունը գեղարվեստական վավերագրության բնագրերի ամենատարածված արտահայտչամիջոցներից է։ Ինքնակենսագրության բնագրում, ի տարբերություն մակդիրի, մեծ է համեմատությունների կշիռը։ Դրանք հյուսվում են մի առարկան կամ երևույթը մյուսին նմանեցնելու, հավասարեցնելու հնարքով՝ հուշագրական խոսքի գեղագիտական արժեքը բարձրացնելու նպատակով։ Համեմատություններում սովորաբար ընդգծվում է համեմատվող առարկաների համար ընդհանուր հատկանիշը, որի հիման վրա կատարվում է նրանց համադրումը. Ահա մի դիպուկ օրինակ. «Մարդու լավագույն

բնորոշումը, ըստ իս, Պասկալինն է, որ մարդուն դուրաթեք եղեգնի հետ է համեմատում. եղեգնի, բայց «մտածո՛ղ եղեգնի»»:

Բնագրում գործածական են անվանական անդեմ նախադասություններ, որոնք կարող են լինել համառոտ և ընդարձակ: Գեղարվեստական-վավերագրական արձակում նման տեսակի անվանական նախադասություններն առավելաբար լինում են բացականչական բնույթի: Օրինակ՝ «Ի՛նչ տարիներ էին: Հիշելն անգամ սարսուռ է պատճառում: *Մո՛լ: Ցո՛ւրս*»:

Ինքնակենսագրության մեջ առկա են գրականագիտական վերլուծության պատառիկներ, կոմիտասասիրության նվագներ, ինքնահարցադրումներ: Ահա բառի բնորոշումը. «Իսկ բա՛ռը: Նա նման է նորահաս աղջկա, որ միշտ հագած-կապած է, կռճկված ու ամոթխած, զգույշ ու խրտչուն: Եվ նրան մերկ կարող է տեսնել այն տառապյալը միայն, որ սիրում է նրան իր կյանքից առավել և որին՝ երջանիկին, այդ պատճառով էլ սիրում է ինքը՝ բառը... »

Պ. Սևակի «Անցյալը ներկայացած» ինքնակենսագրությունը գեղարվեստական գյուտ է, որի լեզվական հիմքերը հետաքրքրություն են ներկայացնում:



ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Խ. Արուսյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մաշտոցի անվան Մատենադարանի
Ձեռագրագիտության բաժնի
ավագ գիտաշխատող,
Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻ «ԵՐԳ ԵՐԳՈՑ» ՊՈԵՄԸ ԵՎ ԱՍՏՎԱԾՄԱՇՏՈՒՆՉԸ

Ներածություն

Մարդկության երբևէ ստեղծած հրաշալի հյուսվածքներից է Աստվածաշնչի «Երգ երգոցը»: Միրո զգացումը և սիրահարներին պանծացնող Սողոմոն Իմաստունին վերագրված այս ձևը հիացրել է թե՛ հին, թե՛ նոր աշխարհի մտածողներին, ներշնչանքի աղբյուր դարձել բանաստեղծների համար¹: Հնարավոր է՝ հայ միջնադարյան սիրային քնարերգությունն ընթանալ էր բոլորովին այլ ուղիով, եթե հայ մեկնիչները, Գրիգոր Նարեկացուց սկսած, չմեկնեին և շրջանառության մեջ չդնեին «Երգ երգոցի» խորհրդանիշների հարուստ համակարգը²,

¹ «Երգ երգոցի» բնագրի թարգմանություններ, մեկնություններ և գեղարվեստական երկեր տե՛ս Песнь песней Соломона, Москва, 2007, 459 с.: Լ. Հովսեփյան, Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնության հարաբերակցությունը տաղերի հետ, «Հայագիտական հանդես», Երևան, 2006, թ. 2, էջ 25-36: Լ. Հովսեփյան, Երգ երգոցը և Գրիգոր Նարեկացին, «Բանբեր Մատենադարանի», Երևան, 2020, թ. 30, էջ 93-108:

² «Երգ երգոցը» եղել է միաստիկների սիրած գիրքը. Ա. Դուլուխանյան, «Երգ երգոցը» և Պարույր Սևակի համանուն պոեմը, «Գարուն», Երևան, 1988, թ. 9, էջ 88-89 (Նույն հոդվածում միաստիկների և Երգ երգոցի մասին տե՛ս В. Хвостов, Очерк истории этических учений, Москва, 1912, с. 73):

որը դարձավ բանաստեղծական գյուտերի մի իսկական շտեմարան և միջնադարյան սիրային քնարերգության հիմնաքարը:

Սողոմոն Բմաստունի այս չքնաղ հյուսվածքը դարձել է Պարույր Սևակի սիրո անմոռանալի ներբող «Երգ երգոց» պոեմի հիմքը, որի գրության թվականը հեղինակը նշել է՝ 1957 թ. դեկտեմբեր, 1960 թ. մայիս, տեղը՝ Մոսկվա³: Պ. Սևակի ստեղծագործության հարցերով զբաղվող մասնագետներն անդրադարձել են պոեմի հղացման, կառուցվածքի, գեղարվեստական արտահայտչամիջոցների խնդիրներին՝ հիմնականում ընդգծելով կապն Աստվածաշնչի հետ (կարևորվել են պոեմի բնաբանները), ինքնակենսագրական ազդակը և գեղարվեստական կատարելությունը⁴: Այս վերլուծությունների կողքին առաջարկում ենք բնագրի մեր մեկնությունը՝ նկատի ունենալով հետևյալ խնդիրները.

ա. Պարույր Սևակը և հինկտակարանյան «Երգ երգոցը»:

բ. Պոեմի կառուցվածքը և կապը Սողոմոնի «Երգ երգոցի» հետ:

³ Ըստ Ա. Արիստակեսյանի՝ պոեմի առաջին երեք գլուխները գրվել են 1957 թ., իսկ մյուս երկուսը՝ 1960 թ.: Տե՛ս Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, 1984, էջ 264: Այս մասին ակնարկ կա նաև Մուլամիթայի 1958 թ. հունիսի 6-ի նամակում. «Իսկ դոցենտ Լեբեդյան ասաց. «Օ, այդպիսի անուն (իմ մասին): Նրա մասին բանաստեղծներն են գրել»: Ուզում էի ավելացնել. *«Միայն թե վերջացնել չկարողացան»*»: Տե՛ս Հ. Չարիսյան, Մուլամիթա: Սևակի մեծ սերը, Երևան, 2004, էջ 111:

⁴ Գրականագիտական վերլուծությունն ու գրաքննադատան անդրադարձները տե՛ս Թ. Մուկուչյան, Մեկնություն Պարույր Սևակի «Երգ երգոցի», «Գարուն», Երևան, 1976, թ. 6, էջ 49-53: Լ. Արզումանյան, Պարույր Սևակի պոեմները, Երևան, 2001, էջ 99-131: Ն. Հովսեփյան, Պարույր Սևակի ստեղծագործությունը, Երևան, 1983, էջ 161: Թ. Մարության, Պարույր Սևակի պոեմների գրաքննադատական անդրադարձները («Սիրային պոեմների գրաքննադատական անդրադարձները Ա. «Երգ երգոց» գլուխը), Երևան, 2006, էջ 84-97: Ն. Ներսիսյան, Աստվածաշնչի «Երգ երգոց»-ի և Պ. Սևակի «Երգ երգոց»-ի պատկերավորման համակարգի զուգադրական քննություն, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2019, թ. Ը., էջ 110-128: Իրականում հոդվածս քննում է Պ. Սևակի պոեմի պատկերավորման համակարգը:

գ. «Երգ երգոցի» բնաբանները որպես պոեմի հյուսվածքի ամեն առանձին հատված ընկալելու բանալի:

ա. Պարույր Սևակը և հինկտակարանյան «Երգ երգոցը»:

«Երգ երգոց» պոեմի ազդակը 1957 թ. դեկտեմբերին Մոսկվայում Պարույր Սևակի հանդիպումն էր հրեուհի Սուլամիթա Ռուդնիկի հետ, ով դարձավ հեղինակի ճակատագրական սերը և մուսան⁵: Այդ հանդիպման դրվագի գեղարվեստական խտացումն է պոեմի մուտքը

*Գարունն այս անգամ ձմռանը եկավ,
Այն էլ հյուսիսում.
Երբ բոլորովին չէի սպասում նրան,
Չմեռն այս վկա⁶:*

Արդյո՞ք պոեմի բանաստեղծական ներշնչանքի ազդակը Ռուդնիկի Սուլամիթա անո՞ւն էր, թե հինկտակարանյան «Երգ երգոցի» նկատմամբ բանաստեղծի տևական հիացմունքը, որ ընդամենը մի կայծից հրդեհ բռնկեց: Այս հարցին լույս է սփռում Ն. Հովսեփյանի և Պ. Սևակի զրույցի մի դրվագ. «Թվաց, թե դարերի խորքից կենդանություն է առել Սողոմոն Իմաստունի սիրելին՝ պարտիզպանի սևահեր դուստրը և կանգնել իմ դիմաց: Սիրեցի նրան և այդ օրերին դատարկ գրպանով ես ինձ արքա էի կարծում,- հուզված՝ խոսքը եզրափակեց Սևակը⁷: «Երգ երգոց» պոեմում կարդում ենք.

*Քո բիրլիական անունն եմ սիրում,
Սիրում եմ, այն էլ բիրլիակա՛ն սիրով (էջ 143):*

⁵ Պ. Սևակը «Մայաթ-Նովա» մենագրության՝ Սուլամիթային ուղղված ընծայականում խոստովանում է. «Սուլկա ջան, այս գիրքը չէր գրվի, եթե չլիներ քո Մերը: 15. 12. 1969. 19. 12. 1969»: Տե՛ս Հ. Չարիսյան, Սուլամիթա: Սևակի մեծ սերը, գիրք 2, Երևան, 2014, էջ 386:

⁶ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 3, Երևան, Պոեմներ, 1973, էջ 143 (այսուհետև մեջբերումներն այս աղբյուրի. հղվող էջերը՝ շարադրանքի կողքին՝ փակագծերում):

⁷ Թ. Մարության, Պարույր Սևակի պոեմների գրաքննադատական անդրադարձները, էջ 92:

Պ. Սևակի ստեղծագործական աշխարհին հաղորդակից ցանկացած մեկը գիտի նրա բազմակողմանի և ահռելի մտավոր պաշարի մասին, որտեղ Աստվածաշունչն ու միջնադարի հայ քնարերգությունը բացառիկ տեղ են զբաղեցնում: Աստվածաշնչի «Երգ երգոցը» Պ. Սևակը համարում էր պոեզիայի նախահիմք. 1965 թ. մայիսի 19-ին Գագիկ Դավթյանին ուղղված նամակի մեջ «Երգ երգոցի» մասին գրում է. «Իմ կարծիքով, համաշխարհային քնարերգությունը դրա նման մի բան չի ստեղծել մինչև օրս: Համենայն դեպս դա մի ճշմարիտ գլուխգործոց է, բանաստեծության մի անխորտակելի կոթող»⁸:

Ամեննին զարմանալի չէ, որ հինկտակարանյան «Երգ երգոցը» դարձավ երկու սիրահարներին հավերժ կապող կանաչ-կարմիրը. Պ. Սևակը գրում է Սուլամիթայի ծննդյան օրը (1964 թ. մայիսի 17). «Իսկ դու հիմա (քո անունը) Հայաստանում ամենասիրելին ես: «Երգ երգոցը» բոլորին շատ դուր եկավ, և ամեն քայլափոխի լսելի է քո սիրելի անունը... կարդում են անգիր»⁹: Անգամ Պ. Սևակի մահից տարիներ հետո, երբ որք Սուլամիթան այցելում է Հայաստան, հիշում է, որ իրեն ճանաչում էին որպես Սևակի պոեմի հերոսուհի¹⁰:

Պ. Սևակին հիանալիորեն հաջողվել է կիրառել «Երգ երգոցի» պատկերային համակարգը, միաժամանակ ստեղծել ի՛ր և միայն ի՛ր «Երգ երգոցը»՝ «պահպանելով իր ոճի ինքնատիպությունը, հարազատ մնալով իր ըմբռնումներին և գեղագիտությանը»¹¹: Իրավացի է Լ. Արզումանյանը, երբ պնդում է, թե «ոչ մի պայմանով չի կարելի այն

⁸ Ա. Թովմասյան, Պարույր Սևակի անձի և ստեղծագործության հոգեբանության մի քանի հարցեր, Երևան, 2007, էջ 52-53: Հ. Չարխչյան, Սուլամիթա: Սևակի մեծ սերը, 2004, էջ 14-15: «Ով չի կարդացել Աստվածաշունչը, նա չի կարող իսկական իմաստով գրագետ մարդ կոչվել, առավել ևս՝ գրականագետ: Իսկ ով չի սերտել «Երգ երգոցը», նա չի կարող գաղափար ունենալ պոեզիայի սկզբնականի մասին...»: Տե՛ս Ս. Սարինյան, Պարույր Սևակ, Երևան, 2006, էջ 117:

⁹ Հ. Չարխչյան, Սուլամիթա. Սևակի մեծ սերը, գիրք 2, էջ 251:

¹⁰ Նույն տեղում, էջ 421-422, 423:

¹¹ Լ. Արզումանյան, Պարույր Սևակի պոեմները, էջ 116:

շփոթել գրական ռճավորման կամ նմանակման հետ»¹²: Ս. Սարինյանի վկայությամբ՝ Պ. Սևակը նպատակ ուներ «...գրական մշակման ենթարկել «Երգ երգոցը»»¹³, որը, ցավոք, չհասցրեց իրականացնել:

Այսպիսով՝ Աստվածաշունչը և հատկապես «Երգ երգոցը» կարևոր դեր ունեցան հեղինակի գրական ճաշակի ձևավորման հարցում, սակայն Սուլամիթա՝ն էր այն ազդակը, որի շնորհիվ ծնվեց Սևակի սիրային գլուխգործոցը:

բ. Պոեմի կառուցվածքը և կապը Սողոմոնի «Երգ երգոցի» հետ:

Սողոմոնի «Երգ երգոցը» հայկական կանոնում հանդես է գալիս 8 տնատված գլուխներով¹⁴: Պ. Սևակը պոեմը բաժանել է 5 գլուխների (նույնպես տնատված), որոնք ունեն բնաբաններ Աստվածաշնչի «Երգ երգոց» և «Ժողովող» գրքից: *Այսինքն՝ հեղինակը պահպանել է հինկտակարանյան «Երգ երգոցի» արտաքին հատկանիշները:*

«ԵՐԳ ԵՐԳՈՅ» ՊՈԵՄԻ ԲՆԱԲԱՆՆԵՐ	
Երգ երգոց <i>Գլուխ Ա.</i> Խնդրեցի զնա՝ և ոչ գտի, Կոչեցի զնա՝ և ոչ ետ ինձ ձայն... Գ. 1 Իդր թափեալ է անուն քո Ա. 2 (6 մաս):	<i>Գլուխ Դ.</i> Ահեակ նորա ընդ գլխով իմով, և աջ նորա պատեցե՛ զինն... Ը. 3 (10 մաս):
<i>Գլուխ Բ.</i> ...Գեղեցիկ ես իբրև զԵրուսաղեմ... Զ. 3: (12 մաս):	<i>Գլուխ Ե.</i> ...Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ... Դիր զիս իբրև զկնիք ի վերայ սրտի քո... վասն զի հզոր է իբրև

¹² Լ. Արզումանյան, Պարույր Սևակի պոեմները, էջ 99:

¹³ Ս. Սարինյան, Պարույր Սևակ, էջ 203-204:

¹⁴ Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենական հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: յԱաշխատասիրութենէ տեառն Հ. Յովհաննու Զօհրապեան վարդապետի, Վենետիկ, 1805, «Երգ երգոց», էջ 1099-1010. սուրբգրային բոլոր հղումներն այս հրատարակությունից՝ համապատասխան գլխի և տան համարով՝ առանց էջի հիշատակման:

<i>Գլուխ Գ. Մուծէք զիս ի տուն զինւոյ...</i> Բ. 4 Վասն զի խանդակաթ եմ ես սիրով... Բ. 6 (12 մաս):	զմահ սեր... Ը. 6 Ժողովող Լաւ են երկու, քան զմի... (Դ. 9) զի եթէ ննջեացեն երկուք՝ ջեռուցանեն զմիմեանս, իսկ մին՝ զիս՝ ըն- ռուցու... Դ. 11 (14 մաս):
---	---

Ինչո՞վ բացատրել պոեմի բնաբանների այսօրինակ հաջորդականությունը (Գ. 1, Ա. 2, Զ. 3, Բ. 4, Բ. 6, Ը. 3, Ը. 6): Աստվածաշնչի որոշ հրատարակություններում «Երգ երգոցի» գլուխները վերնագրված են սիրահարների հոգեվիճակի տարբեր դրսևորումներին համապատասխան¹⁵: Նույն կերպ Սևակի պոեմի ամեն առանձին գլուխ արտացոլում է սիրո կոնկրետ հոգեվիճակ՝ հանդիպում, հիացում, տառապանք, վայելք, կարոտ¹⁶: «Երգ երգոց» պոեմի բնաբանների առնչությամբ Սևակը գրում է Սուլամիթային. «Բնչպե՞ս եմ սիրում: Հիմա կասեմ: Եվ սա է իմ «ասքը», որովհետև դրանք բանաստեղծություններ չեն. իմ նամակներն են, իմ նամակների շարունակությունները»¹⁷:

Այսպիսով՝ փոփոխվող հոգեվիճակները կազմում են պոեմի «դիպաշարը», և այդ շղթան չխախտելով՝ հեղինակը բնաբաններն *ընտրում-հարմարեցնում* է իր ապրումներին, սիրային տրամադրությանը, *այլ ոչ թե ուղիղ ձևով հետևում է հինկտակարանյան բնագրին*:

¹⁵ 1. Սիրողի և սիրեալի երգը: 2. Սիրեալի փափաքը դեպի սիրողը: 3. Սիրեալի հաւատարմութիւնը: Սիրողի փառաւորութիւնը: 4. Սիրեալի գերազանցութիւնը: 5. Սիրեալը լսում է սիրողի ձայնը, գանգատում է բաժանումից և գովում նրա գեղեցկութիւնը: 6. Իրար տեսնելու ուրախութիւնը: 7 Սիրողի եւ սիրեալի խօսակցութիւնը: 8. Իրար հետ մշտապէս միաւորուածների հաւատարմութիւնը. Աստուածաշունչ մատեան Հին եւ նոր Կտակարանների եբրայական եւ յունական բնագրերից թարգմանուած, Կոստանդնուպոլիս, Ա. Յակոբ Պոյաճեանի տպարան, 1896, էջ 781-786:

¹⁶ Ա. Արիստակեսյան, Պարոյր Սևակ, էջ 267:

¹⁷ Նամակի շարունակության մեջ խոսում է «Երգ երգոց» պոեմի առաջին երեք գլխի բնաբանների մասին. տե՛ս Սուլամիթային ուղղված Սևակի 18.12.1960 թ. նամակը Հ. Զարիսյան, Սուլամիթա, Սևակի մեծ սերը, էջ 360-361:

գ. Պոեմի բնաբանները որպես հյուսվածքի ամեն առանձին հատված ընկալելու բանալի:

Առաջին գլխի «Խնդրեցի զնա՝ և ոչ գտի, Կոչեցի զնա՝ և ոչ ետ ինձ ձայն...» (Գ. 1), «Իւղ թափեալ է անուն քո...» (Ա. 2) բնաբանները բացահայտում են պոեմի այս հատվածի ապրում-ասելիքը. դա անսպասելի հանդիպումն է: Բոլոր 5 գլուխների բնաբաններն ունեն պոեմի ասելիքը բացահայտող բանալի բառեր և արտահայտություններ: Առաջին գլխի համար դրանք են՝ «Խնդրեցի զնա...» և «անուն»:

Քեզ չփնտրեցի, չորոնեցի

Թույլ տուր կրկնել՝

Եվ... գտա հանկարծ:

Համբույրց առաջ,

Բնչպես դու մի օր անունդ

Համբույրի նման

ես գտել,

Կրկնել անունքդ (էջ 145):

Օ, Սուլամիթա (էջ 143):

Դժվար չէ նկատել, որ բանաստեղծն այստեղ հակադրվում է սողոմոնյան բնագրին. «չփնտրեցի, չորոնեցի, գտա»-ն՝ աստվածաշնչյան «փնտրեցի, կանչեցի, չգտա»-ի փոխարեն: Ողջ հատվածը սիրեցյալի հետ հաղորդակցվելու («Բաց արա դուռդ» (էջ 144): «Թույլ տուր խոսել. գրկելուց առաջ» (էջ 145): «Թույլ տուր կրկնել... անունդ» (էջ 145)), հիացումի հոգեվիճակ է ներկայացնում: Նկատենք՝ որպես բնաբան Սևակը գետեղել է «Երգ երգոցի» նախ Գ. 1, ապա՝ Ա. 2 հատվածները, քանի որ պոեմի հյուսվածքին իմաստով համապատասխան համարել է «Երգ երգոցի» բնագրի այդպիսի՝ հաջորդականություն. զգացմունքի հանկարծակի ծնունդ, սիրեցյալի անհասանելիություն և հիացում: Պ. Սևակն իր սերը մոտեցնում-հասցնում է բիրիլական նախնիների՝ Ադամի¹⁸ և Եվայի պատմությանը.

¹⁸ Ադամ-Սողոմոն կապի մասին հետաքրքիր մեկնաբանություն ունի Գրիգոր Նարեկացին. «...Ադամ յաղագս ոչ բաժանելոյ ի կնոջն եկեր զպտուղն եւ սիբելոյ զնա, այլ ոչ վրաս աստուածանալոյ... Արդ, զայս զիտացեալ Սողոմոնի կարեւոր սէր մարդում, քան զամենայն սէր եւ առակեաց ի Քրիստոսի սէր եւ յեկեղեցոյ առ միմեանս». Մատենագիրք Հայոց, հտ. ԺԲ., Ժ. դար, Գրիգոր Նարեկացի, Անթիլիաս, 2008, Մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի, կազմ.՝ Լ. Յովսէփեան, էջ 767-768:

*Իսկ ես խոսում եմ մայրենի լեզվով՝
Ադամի նման
Ու Եվայի հետ (Էջ 144):*

Երկրորդ գլխի «Գեղեցիկ ես իբրեւ զԵրուսաղէմ» (Զ. 3) բնաբանի բանալի բառը «գեղեցիկն» է, իսկ զգացումը՝ հիացումը: Հասկանալի ակամա հիշեցնում է Սայաթ Նովայի «Աշխարհումս ասի չիմ քաշի» խաղի «Երգ երգոցի» հետ կապված հետևյալ պատկերը.

*Քու էշին ինձի մաստ արալ, յիս զարթուն իմ, սիրտս է քնած.
Աշխարս աշխարով կշտացալ, իմ սիրտս քիզնից սով մնաց.
Յար, քիզ ինչո՞վ թարիփ անիմ, աշխարհումս բան չմնաց:*

Միջնադարի հայ քնարերգության զարդ՝ մարմներգությանը Պ. Սևակը նոր երագներ է հաղորդում՝ սիրեցյալի «արտաքին» գեղեցկությունն արտացոլելով հոգով և աչքով:

<i>Գեղեցիկ ես դու, ինչպես բոլորը, Որոնց սիրում են...</i>	<i>Ինչպես բոլորը, որոնց սիրում են: Եվ կախարդիչ ես, ինչպես բոլորը, Որոնց չեն տիրել (Էջ 145):</i>
<i>Ինչո՞ւ է գեղեցիկ՝ ուրիշը կասի, Մինչդեռ ինձ համար դու գեղեցիկ ես,</i>	

Հաջորդիվ Պ. Սևակը թվարկում է սիրեցյալի բարեմասնություններն արդեն Սողոմոն Իմաստունի բառապաշարով.

Պարույր Սևակ, «Երգ երգոց». Գլուխ երկրորդ	Սողոմոն Իմաստուն, «Երգ երգոց»
Դու սև ես, ինչպես քո ժողովրդի դարավոր բախտը (Էջ 146):	Մեաւ եմ ես եւ գեղեցիկ դստերք Երուսաղէմի (Ա. 4):
Սև են վարսերդ, ինչքան ճերմակ է դեռ փակ կուծրքը քո (Էջ 146):	Վարսք քո իբրեւ գերամակս այծից որք երեւեցան ի Գաղաաղէ (Դ. 1):
Ճերմակ են նաև քո ատամները (Էջ 146):	Ատամունք քո իբրեւ գերամակս կտրելոց որք ելանեն ի լուալեաց (Դ. 2)
Քո պարանոցը՝ ազնիվ մարմարե մի վեհ աշտարակ (Էջ 147):	Իբրեւ զաշտարակն Դաւթի պարանոց քո (Դ. 4):

«Սիրո ցանկությունն ինքն իրեն արտահայտելն է», - ասում է Ջիբրան Խալիլը: Օայթթում է սերը բիրիական թոփչով, և երբ Սևակը հայացքը հառում է սեփական հոգու խորքը, հպարտ է զգում իրեն՝ որպես արքա, որպես մի Սողոմոն, որովհետև ունի... Սուլամիթա.

<i>11. Տեսնո՞ւմ ես, թե՞ քեզ ինչպես եմ սիրում.</i>	<i>Հարճեր ու կանայք, Ո՛չ էլ նրանով, որ ես կարող եմ</i>
<i>Առասպելական քո</i>	<i>Երգ երգոց թողնել:</i>
<i>նախապապի՝ Սողոմոնի՝ պես (կրկն. 12րդ հատվածում-Լ.Հ.)...</i>	<i>Եթե ինձ համար թագուհի ես դու, Ի՞նչ եմ ե՛ս հապա. . .</i>
<i>Ես ինչ-որ չափով նո՛ւյնպես</i>	<i>Թագուհիները ե՞րբ են</i>
<i>արքա եմ:</i>	<i>պատկանել մանկկավիկների (էջ</i>
<i>Ոչ նրա համար, որ ունեցել եմ</i>	<i>148):</i>

Սուլամիթային ուղղված նամակներում նույնպես Պ. Սևակը հաճախ իրեն համեմատում էր «Սողոմոնի» հետ¹⁹:

Գլուխ երրորդ. «Մուծեք զիս ի տուն գինւոյ...» (Բ. 4): Վասն զի խանդակաթ եմ սիրով...» (Բ. 6): Ա. Արիստակեսյանն այս հատվածում արտացոլված հոգեվիճակը համարում է «տառապանք», սակայն բանաստեղծի հոգեվիճակի համար ավելի պատկերավոր է թվում է «խանդակաթ սիրով» արտահայտությունը²⁰: Հեղինակն իր ապրումը բնորոշում է որպես «նվաղում»: Պ. Սևակն այս հատվածում արդեն արքան չէ, որ բարձրաձայնում էր իր սիրո մասին, այլ սիրո սպասումից նվաղած, միաժամանակ ահագնացող զգացումի ֆիզիկական ապ-

¹⁹ 1961 թ. 05.03. «...Թույլ տուր ինձ՝ Սողոմոնիս... հոտոտել այդ բույրը»: [1962 թ.] «Սուլա ջան, հարազատս: Ես հիմա դուրս եմ գալիս փնտրելու ոչ թե «Երգ երգոցի» Սուլամիթային, այլ... ատաղձագործի»: 1963 թ. 28.12. «Մարդը ափի մեջ» Սուլամիթային ուղարկված օրինակը Սևակը մակագրում է՝ «Սողոմոն». Հ. Չարխյան, Սուլամիթա, Սևակի մեծ սերը, գիրք 2, էջ 67, 196, 240:

²⁰ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. 1. Ա-Կ, Երևան, 1979, էջ 921. «Ուր իցե կաթումն խանդի՝ ըղձի՝ եռանդուն սրտի. ըղձակաթ... անձկացեալ գթով կամ կարօտով»:

բումը զգացող մի սիրտ. բանաստեղծը ձայն է տալիս իրեն ունկնդիր
Երուսաղեմի աղջիկներին (9 անգամ).

Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկներ ի խարստյաշ,

Դուստրեր Հյուսիսի

Ի՛նձ էլ սնուցեք կազդուրիչ գինով,

Քանի որ սիրուց նվաղում եմ (էջ 149):

Երուսաղեմում երբևէ չեղած աղջիկներ ի խարստյաշ,

Ի՛նձ էլ սնուցեք կազդուրիչ գինով,

Քանի որ -տեսեք-ձկվում եմ արդեն

Մեփական սրտիս ծանրության ներքո (էջ 149):

Բանաստեղծական այս ոճը Սևակը կիրառում է նաև նամակ-
ներում. «Աղերսում եմ ձեզ, հեռագրավաճառուհիներ, հայտնեք Սու-
լամիթային, որ շնորհավորում եմ Նոր Տարին նոր սիրով. *Սողոմոն*»²¹:

Պ. Սևակ, «Երգ երգոց» գույն երրորդ	Սողոմոն Իմաստուն, «Երգ երգոց»
Ինձ էլ սնուցեք կազդուրիչ գինով, Քանի որ <i>սիրուց ես նվաղում եմ</i> (էջ 149):	Մուծեք զիս ի տուն գինույ, կարգեցեք ի վերայ իմ զսեբ. հաստատեցեք զիս իւղով. կուտեցեք յիս խնձոր. զի <i>խանդակաթ եմ ես սիրով</i> (Բ. 4, 5):
<i>Ողջ գիշերն</i> ի լույս իմ մահճակալին <i>Փնտրում եմ նրան, չեմ գտնում սակայն:</i> Ողջ ցերեկն ի բուն իմ նեղ սենյակում <i>Կանչում եմ նրան, և ձայն չի տալիս,</i> Եվ դուրս եմ գալիս, Որ <i>փողոցներում</i> որոնեմ նրան (էջ 149-150):	Յանկողնի իմում <i>ի գիշերի խնդրեցի</i> զոր սիրեաց անձն իմ, խնդրեցի զնա՝ <i>եւ ոչ գտի.</i> <i>կոչեցի՝ եւ ոչ ետ ինձ ձայն</i> (Գ. 1): Յարեայց եւ շրջեցայց ընդ քաղաքն ընդ <i>փողոցս</i> եւ ընդ հրապարակս՝ եւ <i>խնդրեցից</i> զոր սիրեաց անձն իմ: Խնդրեցի զնա՝ <i>եւ ոչ գտի</i> (Գ. 2):
<i>Երդվեցնում եմ ձեզ,</i> ասացեք նրան, Որ ես հիվանդ եմ կարեվեր սիրով (էջ 150):	<i>Երդմնեցուցից զձեզ</i> դստերք Երուսաղեմի ի գալութիւնս եւ ի հաստատութիւնս ագարակի (Գ. 5):
Ասացեք նրան, որ <i>փակ այգի է,</i>	<i>Պարտեզ փակեալ</i> քոյր իմ հարսն,

²¹ Հ. Չարիսյան, Սուլամիթա. Սևակի մեծ սերը, գիրք 2, էջ 240:

Այգու մեջտեղում՝ դրնփակ հնձան, Բուրող հնձանում՝ եռացող գինի (էջ 151):	պարտեզ փակեալ եւ աղբեր կնքեալ (Դ. 12)
Ավելացրեք, Որ առայժմ ես <i>ննջում եմ անուժ</i> , Բայց դեռ <i>արթուն է սիրտըս</i> նվաղուն (էջ 152):	<i>Ես ննջեմ, եւ սիրտ իմ արթուն կայ</i> (Ե. 2)

Պոեմի այս հատվածն առանձնանում է զգացմունքի սլացքով և հուզականությամբ: «Երգ երգոցի» հետ ունեցած ամենասերտ կապն արտահայտվում է հենց այս գլխի մեջ (տե՛ս վերը բերված համեմատական աղյուսակը):

Սիրո վայելքի մի անկրկնելի ներբող է պոեմի չորրորդ գլուխը, որի բնաբանն է՝ «Ահեակ նորա ընդ գլխով իմով, և աջ նորա պատեսցե զինն» (Ը. 3), զգացումը՝ վայելք: Բանալի բառ չենք առանձնացնում այս հատվածի համար, քանի որ այն ամբողջությամբ սիրո վայելքի վիճակն է արտացոլում, և կարող էր մի առանձին ստեղծագործություն դառնալ: Պոեմի այս հատվածն ամենաքիչն է կրել «Երգ երգոցի» ազդեցությունը (միայն երկուսը՝ «Եկար վազեվազ եռամսյա կայտառ զամբիկի նման»²² (էջ 152)», «Ես այգի չունեմ...»²³ և այգի՛ս չեկար (էջ 152)»): Թերևս այս հատվածում է, որ զգացմունքը թևածել է ազատ և անկաշկանդ. հաշվի առնենք հոգեբանական հանգամանքը, 4-րդ և 5-րդ հատվածները հյուսվել են տարիների ընդմիջումից հետո՝ Սուլամիթայի և Սևակի միջև երկար լռությունների միջակայքում. շատ բան բանաստեղծի մտքում ապրված էր կրկին ու կրկին, զոված-ամփոփված, չկար առաջին տպավորության կայծակնային ցնցումը, երբ «Երգ երգոցը» հոսեց ու լցրեց բանաստեղծի սիրտը: Սա արդեն հասուն, իր կյանքն ապրած ու փորձությանը դիմացող զգացմունքն էր, որ հորձանք էր տալիս: Ուստի պատահական չէ նաև վերջին՝ 5-րդ գլխում

²² Հմմտ. Երիվարացն իմոց ի կառսն Փարաունի նմանեցուցի զքեզ մերձաւորդ իմ (Ա. 8):

²³ Հմմտ. «Այգի եղև Սողոմոնի ի Բեելմաուն. ետ զայգին իւր ցպահապանս. բերցե այր իւրաքանչիւր ընդ պտղոյ նորա հազարս արծաթոյ» (Ը. 11):

հնչող թախծալի տրամադրությունը, որ ծնվում է բաժանման ցավից, սիրաշաղախ կարտոից: Այս գլխի համար Սևակը «Երգ երգոցի» «Ես ննջեմ, և սիրտ իմ արթուն կայ...» (Ը. 3), «Դիր զիս իբրև զկնիք ի վերայ սրտի քո... վասն զի հզոր է իբրև զմահ սեր» (Ը. 6) բնաբանին կցում է Ժողովողի «Լաւ են երկու, քան զմի...» (Դ. 9): «Զի եթէ ննջեսցեն երկուք, ջեռուցանեն զմիմեանս, իսկ մին՝ զիա՞րդ ջեռուցու...» (Դ. 11) հատվածները: Իշխող զգացումը կարոտն է:

Համարվում է, որ Սողոմոնը Ժողովողը հյուսել է կյանքի վերջին տարիներին՝ ապաշխարության շրջանում. այս գիրքը Աստվածաշնչի թերևս ամենափմաստուն և թախիժ առաջացնող գրքերից է: Ինչպես չորրորդ, այս հատվածում ևս սողոմոնյան բնագրի հետ կապը թույլ է, սակայն ներքին կապն ակնհայտ է արդեն պոեմի 1-ին և 3-րդ գլուխների միջև: Երրորդում հնչող՝ «...Ես ննջում եմ անուժ, / Բայց դեռ արթուն է սիրտըս նվաղուն» արտահայտությունը կրկնվում է այս գլխում, սակայն տարբեր նրբերանգներով: Կար սիրո սպասում, միասին լինելու անհագ ու ապրեցնող հույս: 5-րդ գլխում, սակայն, սիրո հուժկու ալիքները հետ են քաշվում և տեղատվություն ապրում.

Թե ես ննջում եմ, իսկ սիրտս արթուն է:

Եվ փնտրում եմ քեզ,

Սակայն չեմ գտնում,

Ու կանչում եմ քեզ,

Բայց ձայն չես տալիս.

Տարածություն է ընկած մեր միջև (էջ 155):

Առանց քեզ ապրելն այնքան է հիմա

Անհասկանալի և տարօրինակ,

Որքան սառույցի կամ ձյունի վրա

Վառվող խարույկը:

Ու ես ապրում եմ՝

Այդպե՛ս վառվելով (էջ 156-157):

Գարուն է նորից, զարթոնք, թվում է՝ ոչինչ չի փոխվել, միայն մի բան. այս անգամ սիրողի մարմինն է արթուն, սիրտը՝ քնած.

*Գարունը նորից
իր վտանգավոր քարոզն է կարդում,
Կոչեր է անում ինչ-որ նոր սիրո,
Եվ չի հասկանում,
Որ վտանգավոր իր քարոզի դեմ
Թե ես արթուն եմ՝ իմ սիրտն է քնած (էջ 155):*

«Երջանիկ սերը պատմելու բան չունի», այո՛, և Սևակը պանծացնում է վեհացնող տառապանքը, այլևս ավարտված սիրո վերհուշը, որը դեմքը ուղղում է դեպի բանաստեղծի սիրտը՝ դառնալով սիրո հավերժ ներբող թե՛ հեղինակի և թե՛ ընթերցողի համար.

*Դու կարծես չկաս
Ու չես լինելու,
Այլևս ինձ համար մեռած ես կարծես:
Սակայն ես գիտեմ,
Որ դու անմահ ես,
Բնչպես անմահ է կրակն աշխարհում.
Այստեղ կհանգչի,
Կվառվի այլուր (էջ 157):*

«Երգ երգոց» պոեմով Պ. Սևակը մեկ անգամ ևս հաստատում է նարեկացիական պատգամը. «Չիք ինչ յերկրի պատուականագոյն քան զսէրն առն եւ կնոջ»: Դա մարդու ունեցած հավերժական ձգտումն է վերերկրայինի նկատմամբ, որը դրսևորվում է աշխարհն իմաստավորող սիրո հզոր վայելքով:

Եզրակացություն

Այսպիսով՝


1. Հինկտակարանյան «Երգ երգոցը» և Պ. Սևակի համանուն պոեմը դրսևորում են կառուցվածքային ընդհանրություններ. երկուսն էլ ունեն առանձին գլուխներ և տնատված են:

2. Պ. Սևակը պոեմի հինգ գլուխներին կցում է «Երգ երգոցից» քաղած բնաբաններ ոչ այն հաջորդականությամբ, ինչպես Աստվածա-

շնչում է, այլ հարմարեցնում սիրո ապրումի տարբեր հոգեվիճակներ ներկայացնող պոեմի ներքին բովանդակությանը (Գ.1, Ա.2, Զ.3, Բ.4, Բ.6, Ը.3, Ը.6):

3. Սողոմոնի «Երգ երգոցի» ազդեցությունը մեծապես զգալի է պոեմի առաջին երեք գլուխներում, որոնք գրվել են 1957 թ., իսկ 1960 թ. հյուսված չորրորդ և հինգերորդ գլուխներում «Երգ երգոցը» «ներկա է» հիմնականում բնաբանների տեսքով: Այս իրողությունը բացատրվում է հեղինակի ներաշխարհում տեղի ունեցող փոփոխություններով:

5. «Երգ երգոց» պոեմի հինգ գլուխներում արտացոլված սիրո տարբեր հոգեվիճակների համանման դրվագներով են հագեցած Պ. Մևակի և Սուլամիթայի նամակները, ինչը վկայում է, որ պոեմի սիրային տրամադրությունը, ոճը, Սողոմոնի և Սուլամիթայի կերպարների տարբեր վերախմաստավորումները Մևակի ապրելու, սիրելու կերպն են, իսկ պոեմը՝ այդ զգացմունքի շքեղ հուշարձանը:



ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան
գրականության և նրա դասավանդման
մեթոդիկայի ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ «ԵՎ ԱՅՐ ՄԻ՝ ՄԱՇՏՈՑ ԱՆՈՒՆ» ՊՈԵՄԸ

*Ում ես կարելի է կոչել Աստված կամ
Աստվածային մարդ, եթե ոչ նրան, ով
առաջինը գտավ տառերը:
Պլատոն*

Ներածություն

Մեսրոպ Մաշտոցը հայ ժողովրդի գիտակցության մեջ սրբացված անուն դարձավ արդեն հինգերորդ դարում: Նա պաշտամունքի արժանացավ բոլոր դարերում, որովհետև հանճարեղ էր, հայրենասեր, մեծագործ: Նրա կերպարը դարերին է հանձնել Կորյուն վարդապետը՝ Մաշտոցի կրտսերագույն աշակերտը: Նա գիրք գրելու պատվերը ստացել է «Հովսեփի կոչված մի պատվական մարդուց»¹: Հետագայում Մաշտոցին ու հայոց այբուբենին անդրադարձած հայ և օտարազգի հետազոտողները հենվել են Կորյունի «Վարք Մաշտոցի» մատյանի փաստերի վրա:

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, աշխարհաբար թարգմ., ներած., առաջաբ. և ծանոթագր.՝ Մ. Աբեղյանի, Երևան, 1962, էջ 87:

Կորյունից հետո հայ մատենագրության մեջ բազմիցս երախտագիտության խոսք է ասվել Մեսրոպ Մաշտոցի մասին: Նրան հատուկ խանդաղատանքով է հիշում Պատմահայրը, ով ներկայացնում է, թե ինչպես է ստեղծել Մեսրոպը հայոց այբուբենը. «Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արթնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աչքերին երևում է աջ ձեռքի թաթ՝ քարի վրա գրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա»²:

Նույն ջերմությամբ է Մաշտոցին հիշում հինգերորդ դարի վերջին պատմիչը՝ Ղազար Փարպեցին. «Թե որևէ մեկը ցանկանա այս մասին ավելի հավաստի իմանալ, այսինքն՝ նրա կենսագրության, իր հայերեն նշանագրերի մասին, թե ե՛րբ կամ ո՛ւր և կամ ո՛ւմ ձեռքով են ստեղծվել՝ Հայոց թագավոր Վռամշապուհի ջերմեռանդ խնդրանքով, կարող է կարդալ ու տեղեկանալ նույն երանելի Մաշտոցի սիրելի աշակերտ Կորյունի գրքի պատմությունից»³:

Յոթերորդ դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին վկայում է, թե ինչպես Մաշտոցը հայերեն տառերը ստեղծելուց հետո տառեր է հորինել նաև Աղվանքի բնակիչների համար: Նա նաև վկայում է, թե աստվածային շնորհով տառեր է ստեղծել վրացիների համար ևս⁴:

Տասներեքերորդ դարի պատմիչ Ստեփանոս Օրբելյանը ևս իր «Սյունիքի պատմություն» աշխատության մեջ Մեսրոպ Մաշտոցին հիշում է որպես մեծ լուսավորիչ⁵: Մաշտոցի և հայ գրերի գյուտի մա-

² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և մեկն.՝ Ստ. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 405:

³ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Թուրք Վահան Մամիկոնյանին, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր.՝ Բ. Ուլուբաբյանի, Երևան, 1982, էջ 91:

⁴ Мовсес Каланкатуаци, История страны Алуанк, пер. с древнеармянского, предисл. и коммент. Ш. В. Смбатяна, Ереван, 1984, с. 70.

⁵ Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր.՝ Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 80-81, 97-98, 135, 357:

սին խոսել է XI դարի պատմիչ Ստեփանոս Ասողիկ Տարոնացին իր «Տիեզերական պատմության» մեջ⁶:

Մաշտոցի և նրա գերեզմանի սրբատեղի լինելու մասին է վկայում XVII դարի պատմիչ Առաքել Դավրիժեցին. «Նաև Աստծու փառքի հոյակապ, լայնալիստ, բարձրաբերձ տաճարը՝ Սուրբ Մեսրոպ մեծ վարդապետի հանգստարանը, այն Մեսրոպի, որ հայոց գրերը գտավ, ինչպես որ նրա պատմության խոսքերն են ասում, թե նրան տարան ամփոփեցին այն գյուղում, որ անվանվում է Օշական»⁷:

Բազմաթիվ եվրոպացի հայագետներ անդրադարձել են Մաշտոցին ու հայոց այբուբենին՝ նրան համարելով հանճարեղ⁸:

Թեմայի շուրջ տարբեր լեզուներով գրվել են մենագրություններ, խիստ ուշագրավ հոդվածներ, որոնցում ամենատարբեր փաստարկումներով ներկայացվում է, թե ինչու Մաշտոցը ստեղծեց Հայոց այբուբենը, որը ցայսօր անփոփոխ ծառայում է հայ ժողովրդի գիտությանը, կրթությանը, մշակույթին, քաղաքականությանը:

«Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը

Թվում է, թե 1962 թ., երբ Պ. Սևակը գրեց իր «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» անգուգական պոեմը, նա ծանոթ էր Մաշտոցի անվանն ու գործին առնչվող հսկայածավալ գրականությանը: Պոեմը սկսվում է հետևյալ խորհմասսո երկտողով.

*Մենք կայինք նաև Նրանի՛ց առաջ,
Եվ դարե՛ր առաջ:*

⁶ Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Տիեզերական պատմություն, թարգմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Վ. Հ. Վարդանյանի, Երևան, 2000, էջ 117-118:

⁷ Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմ., առաջաբ. և ծանոթագր.՝ Վ. Առաքելյանի, Երևան, 1988, էջ 277: Առաքել Դավրիժեցին ուշ միջնադարի այն պատմիչն է, որն իր աչքով տեսել է սեփական երկի տպագրությունը Ամստերդամում, 1669 թ.: Տե՛ս, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, կազմ.՝ Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան, Երևան, 1988, էջ 58 – Ռ. Դ.:

⁸ Այդ մասին տե՛ս Ա. Դուլիսանյան, Եվրոպացի հայագետները Մաշտոցի և Հայոց այբուբենի մասին, Ս. Էջմիածին, 2005:

Սևակը գիտակցաբար «Նրանից» անձնական դերանունը, որը ներկայացնում է Մաշտոցին, գրում է մեծատառով: Հիշյալ առաջին տողը պոեմում կրկնվում է մի քանի անգամ: Նպատակը՝ Մաշտոցի ազգային ծրագրի խորությունը ներկայացնելն է:

Սևակը հրաշալի գիտի հայ ժողովրդի պատմական անցյալը՝ ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»: Նա քաջաճանոթ է Ոսկեդարի մատենագիրներին, գիտի, որ Ուրարտական շրջանում հայերը որքան քաղաքակիրթ են եղել. կառուցել են ջրանցքներ, ունեցել զարգացած այգեգործություն, զինագործություն, ճարտարապետություն, արվեստ: Հեթանոսական շրջանում ունեցել ենք աստվածներ ու աստվածուհիներ՝ ոսկեձույլ արձաններով ու շքեղ տաճարներով:

Օգտվելով Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից»՝ Սևակը հիշեցնում է Մուշեղ Մամիկոնյանի մեծահոգության մասին, երբ վերջինս Շապուհ Երկրորդին պատվով վերադարձնում է նրա կանանցը: Բուզանդի երկի համապատասխան հատվածը պոեմում ստացել է հետևյալ բանաստեղծական նկարագիրը.

*Մուշեղները մեր՝
Օտար գործությանն ընդդիմանալիս
Նրանց հարեմը գերի առնելով՝
Ու ձեռք չտալով և ոչ մի կնոջ՝
Առնականության և վեհանձնության դաս էին տալիս,
Այնպիսի՝ մի դաս,
Որ ոսոխն անգամ անգիր էր անում...⁹*

Հեթանոսական շրջանի Հայաստանը պատկերելուց հետո Սևակն անցնում է քրիստոնեական Հայաստանի պատմական իրադարձություններին:

⁹ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 4, Երևան, 1973, էջ 244: Այսուհետ պոեմից մեջբերված հատվածների էջերը կնշվեն վերևում – Ռ.Դ.:

Հետաքրքիր ձևով է Սևակը ներկայացրել Հիսուս Քրիստոսի կերպարն ու նրա վարդապետությունը: Հայտնի է, որ հեթանոսական կրոնը մարմնի և աշխարհիկ կյանքի գովերգում ուներ, իսկ քրիստոնեությունն իրական կյանքից գերադասում էր հոգու անմահության գաղափարը.

...Զորավոր էին աստվածները հին,

Այնքա՛ն զորավոր,

Որ անկեղծ էին ու չէին ստում:

Իսկ պատմության մեջ կան ժամանակներ,

Երբ ով չի ստում՝ պիտի կործանվի...

Եվ կործանվեցին աստվածները հին (246):

Բնավ չհակասելով քրիստոնեական վարդապետության մարդասիրական բնույթին՝ Սևակը փաստում է, որ հեթանոսության պետականորեն արգելքը բերեց մի խոսք, որն օտարալեզու էր ու հասկանալի չէր ժողովրդին: Եվ դա տևեց հարյուր տարի: Դրան գումարվեց Հայաստանի տարածքի բաժանումը Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև, որը կատարվեց Պապ թագավորի նենգ սպանությունից հետո: Պոռեմի այս հատվածը քաղված է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունից»: «Այսպես մտածելով՝ նրանք երկու մասի բաժանեցին աշխարհը, պարսից կողմից բաժինը մնաց Խոսրով թագավորին, իսկ Հունաց կողմի բաժինը Արշակ թագավորին: Բայց նրանից էլ շատ գավառներ այս և այնտեղ խուզվեցին, կտրվեցին, և երկուսի աշխարհներից մի փոքր մասը մնաց երկու թագավորներին: Բայց Հայոց թագավորության հիմնական գավառները երկու բաժիններում Հայոց երկու Արշակունի թագավորները՝ Արշակն ու Խոսրովը, սահմաններով խաղաղությամբ բաժանեցին, և Հայոց աշխարհի երկու մասերը հնազանդվում էին ամեն մեկը իր թագավորին. բայց Խոսրովի բաժինը ավելի մեծ էր քան Արշակինը: Եվ երկուսից էլ շատ գավառներ կտրվեցին, և այն ժամանակ և այնուհետև Հայոց թագավորությունը բաժան-

վեց, ցրվեցավ, նվազեցավ, իր նախկին մեծությունից ընկավ»¹⁰: Այս պատմական երևույթը պոեմում ստացել է հետևյալ արձագանքը.

*Հայաստան կոչված աշխարհը կիսված
Նստել էր արդեն
Իրար չկպած ծայրերի վրա ա՛յն աթոռների,
Որոնց տակ անտակ անդունդն էր բացվում:
Իսկ մեր մարմնավոր տերերը բոլոր
Ունեին լոկ մի մտահոգություն,
Լոկ մի խոհ բարձրը՝
Իրենց աթո՛ռը,
Գահո՛ւյքը իրենց
Եվ իրենց բա՛րձը (էջ249):*

Սակը հիշում է Խորենացու պատմության մեջ եղած հետևյալ խոսքը. «Քաջերի սահմանն իրենց զենքն է հենց»:

Անշուշտ Խորենացին էլ իր հերթին այս միտքը քաղել է հելլենական «Գիրք պիտոյից» աշխատությունից, որում կարդում ենք. «Զլակոնացի ոմն հարցեալ, թե ո՞ւր սահմանք Սպարտաց, եւ նորա զնիզակն ցուցեալ ասէ. «Յայսմ վայրի»¹¹:

Քրիստոնեությունն իր ազնիվ բովանդակությամբ ուներ մեկ այլ սպառնալիք, այն կապված էր օտարալեզու քարոզի հետ: Այդ ձևով կարող էր մեռնել ազգային լեզուն, իսկ ազգը ազգ է, երբ ունի իր սեփական լեզուն ու հավատը: Դրա պատգամը հայ ազգի բոլոր հետագա սերունդներին տվել է Խաչատուր Աբովյանը. «Ձեզ եմ ասում, ձեզ՝ հայոց նորահաս երիտասարդք, ձեր անունին մեռնիմ, ձեր արևին դուրբան, տասը լեզու սովորեցեք, ձե՛ր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնե-

¹⁰ Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթագր.՝ Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 401:

¹¹ Գիրք պիտոյից, աշխատասիր.՝ Գ. Մուրադյանի, Երևան, 1988, էջ 38:

ցեք»¹²: Այնքան մերօրյա զգուշացումներ կան Սևակի այս պոեմում, օտարի թելադրանքի վտանգների ահագանգ.

*Հավասարության ու եղբայրության ազնիվ քարոզով
Ուրիշի տուն ու երկիր էր մտնում
Օտար վարք ու բարք,
Օտար ծես ու կարգ:
Իսկ իսկություն չէ՞,
Որ գորքից հետո
Միշտ էլ լեզուն են մարտադաշտ հանում,
Եվ ինչ չի կարող ո՛չ մի գորք անել՝
Լեզուն է անում (էջ 251):*

Իրոք, ըստ պատմիչների հաղորդած տվյալների ամեն հեթանոսականը, որը և՛ սիրված էր, և՛ հայկական էր, արգելվում է: Սևակը համարձակորեն հակադրում է հայկական հեթանոսականը, նոր եկած ասկետիկ քրիստոնեականին.

*Թատրոն՝ն էս գնում՝
Ուրեմն պիղծ ես,
Կեր ու խո՞ւմ արիք
Ուրեմըն պիղծ ես:
Պարի՞նայեցիր
Եվ կամ պարեցիր՝
Ուրեմըն պիղծ ես:
...Այս կյանքի համար գեթ մի՞ տք արեցիր՝
Ուրեմըն պիղծ ես:
«Ամե՛ն ինչ արա ա՛յն կյանքի համար,
Որ քեզնից հետո, հետո է գալիս...»(էջ 252-253):*

¹² Աբովյանական խոսքի մարգարիտներ, «Հայագիտական հանդես», Երևան, 2007, թ. 2, էջ 58:

Այս երևույթն ամենից հստակ ու պատմական, գիտական ձևով բացատրում է Արշակ Չոպանյանն իր «Գրիգոր Նարեկացի» հետազոտության մեջ. «Մեր մեջ ուշ կմտնե աշխարհատյաց վանականության մոայլ միաստիկականությունը: Մեր հին կրոնը, նախ զանդիկ կրոնի¹³ եղբայրը, հուրի և լուսիս երգ մըն է, հետո հույն-լատին հեթանոսության ցոլք, արության ու գեղեցկության նվիրագործում մըն է, միշտ պայծառ ու առույգ ըմբռնումով մը կյանքի: Եվ կյանքի այդ ըմբռնումը ցեղին անչափ հարմար է, որ երկար ատեն, նույնիսկ քրիստոնեության մուտքեն հետո, անիկա կշարունակե սիրել ու պահել նախկին լուսավոր երգերը, ծաղկավետ դիցաբանության կայտառ ու գունագեղ «վիպասանություն»-ները»¹⁴:

Հայ հին վիպասքի երգվող որոշ հատվածներ իր մեկնաբանություններով ավանդել է մեզ Մովսես Խորենացին: Դրանք եղել են դեռ 11-12-րդ դարերում: Այլապես Գրիգոր Մագիստրոսը չէր գրառի Արտաշես արքայի կենսասիրությամբ լի վերհուշը՝ մահվանից առաջ.

*Ո՛տայր ինձ գծուխ ծխանի
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղաց և զվարզելն եղջերուաց.
Մեք փող հարուաք և թմբկի հարկանէաք,
Որպէս օրէն էր թագաւորաց:
(Մագիստրոս, թուղթ ԼԳ)¹⁵*

Խորենացու սիրելի ազգային առաջնորդներն էլ հեթանոսական Հայաստանի արքաներն են. «Ուստի ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել – Հայկ, Արամ, Տիգրան, որովհետև քաջերի սերունդները քաջերն են»¹⁶:

¹³ Զանդիկ նշանակում է զրադաշտական – Ռ.Դ.

¹⁴ Ա. Չոպանյան, Երկեր, Երևան, 1988, էջ 298:

¹⁵ Ա. Աբրահամյան, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 285:

¹⁶ Մովսես Խորենացի, Նշվ. աշխ., էջ 101:

Ինչպես վկայում է Փավստոս Բուզանդը՝ Ներսես Մեծի կաթողիկոսության ժամանակ արգելվեց սգալը հարազատների մահվան ժամանակ: Սակը այդ փաստը արձանագրում է այսպես.

*Որդո՞ւն ես սգում՝
Ուրեմըն պիղծ ես (էջ 253):*

Սակը ազգայինի վերստին վերականգնելը կապում է Մեսրոպ Մաշտոցի հետ.

*Նրանց ծնունդը միշտ էլ թվում է անսպասելի
Եվ հետո մարդկանց դարեր շարունակ զարմանք
պատճառում,
Բայց Նրանք կյանքում միշտ էլ ծնվում են լոկ այն
պատճառով,
Որ անչափ շատ են սպասել Նրանց (էջ 255):*

Նշանավոր պատմաբան Մորուս Հասրաթյանը սպառնիչ բնութագիր է տվել Մաշտոցի ազգափրկիչ գործունեությանը. «Նոր այբուբենը ծառայելու էր որպես ազգային քաղաքական պայքարի միջոց. սեփական ազգային դպրություն, մշակույթ, գիտություն ստեղծելու, հայկական երկու մասի բաժանված հատվածները միավորելու, ֆեոդալական կենտրոնախույս ուժերը իրար մոտեցնելու, անջատ նահանգներն իրար հետ կապելու և վերջապես հասկանալի մայրենի լեզվով պրոպագանդ մղելու՝ քրիստոնեական կրոնը ամրապնդելու և տարածելու համար»¹⁷: Սակը Մաշտոցյան այբուբենը համարում է հզոր և ամենահաղթ զենք.

*Քանզի նորատիպ այս մաքառման մեջ
Այրուծիի տեղ մտքերն են կովում,
Թանաք է հեղվում արյան փոխարեն,
Եվ հաղթանակը կոչվում է Մատյան... (էջ 257)*

¹⁷ Մ. Հասրաթյան, Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1985, էջ 44:

Փառաբանելով հայերի քաղաքակիրթ հեթանոսական անցյալը՝ Սևակն ազդարարում է Հայաստանի հոգևոր կյանքի նոր վերելքը, որն իրավացիորեն անվանում է Սկիզբ՝ բառը գրելով մեծատառով:

Մաշտոցի գրերի գյուտից հետո հայերը ստեղծեցին հարուստ դպրություն: Որքա՛ն դիպուկ է պոեմում ներկայացվում հայոց այբուբենի կենսահաստատ ուժը.

*Սակայն Նա ծնվեց, որ Մնո՛ւնդ դառնա:
Ծնվե՛ց, որ ծնե՛նք,
Եղա՛վ, որ լինենք,
Եվ անմահացա՛վ,
Որ անմահանա՛նք... (էջ 258)*

Մաշտոցն այբուբենը ստեղծեց քաղաքական բարդ պայմաններում: Արևմտյան Հայաստանում հայկական թագավորությունը վերացել էր, իսկ Արևելյան Հայաստանի գլխին դամոկլյան սրի պես կախված էր Պարսկաստանի ձուլման սպառնալիքը: Հայաստանը պետք է հարատևեր. դրա երաշխիքը դարձավ Մաշտոցի հանճարեղ այբուբենն ու լուսավորչական եռանդուն գործունեությունը.

*Այն, ինչ որ անել չկարողացան
Արշակ – Վաղարշակ,
Մուշեղ ու Մուշե,
Սա՛րքեց միայն՝ անգեն ու անգորք.
Մեզնից խլված մեր պետության տեղ
Ստեղծեց մի նոր՝
Չեղյա՛լ պետություն,
Թագավորություն մի հզորագոր: (էջ 260)*

Մաշտոցն Աստվածաշնչի թարգմանությամբ, նաև հարուստ թարգմանական գրականության ստեղծումով հայ ժողովրդի մեջ ամրապնդեց քրիստոնեական ոգին, որը վահան դարձավ այլադավան նվաճողներից պաշտպանվելու համար: Նա հեռատեսորեն դպրոցներ

բացեց նաև Արևմտյան Հայաստանում: Դրանով Հայաստանի բաժանված մասերը միացան:

Բանաստեղծը չի մոռանում, որ երկար դարերով ստեղծված հայ մեսրոպատառ գրչագիր մատյանները հանգրվանում են Երևանում գտնվող Մատենադարանում.

Արյան դեմ թանաք,

Սրի դեմ՝ գրիչ,

Եվ դարանի դեմ՝ Մատենադարան...(էջ 263):

Սևակը լիովին բացահայտել է, թե Մաշտոցի ստեղծած այբուբենը որքան հոգեկան կորով բերեց հայերին: Իսկ երբ ազգի հոգին աննկուն է, ապա նա կհարատևի:

Դեռ 1945 թվականից Սևակի գիտական հետաքրքրությունները կապված են ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին և միջնադարյան գրականության բաժնի հետ, որի ասպիրանտն է նա դառնում:

Բանաստեղծն ուներ Գրիգոր Նարեկացու պաշտամունքը, հրաշալի յուրացրել էր Աստվածաշնչի Հին և Նոր կտակարանները: Դա պարզ երևում է նրա ողջ ստեղծագործություններից: Եթե կուզեք, ապա ուշադիր կարդալու դեպքում «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը գրված է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգութեան» երկի շնչով: Եթե Նարեկացին մարդու ճակատագրի հետ կապված բոլոր հույզերը կիսում է Աստծու հետ, ապա Սևակը Մաշտոցյան գրերի ազգային ինքնագիտակցության նշանակությունը բացատրում է իր ժամանակակիցներին ու հետագա սերունդներին:

Պ. Սևակի երկերի վեցհատորյակի առաջին հատորի սկզբում ներառվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի առաջաբանը՝ «Պարույր Սևակի ստեղծագործությունը» վերնագրով: Հատորները լույս են տեսել 1972 թ., երբ Բանաստեղծն այլևս ողջ չէր: Ի թիվս այլ ժողովածուների՝ այստեղ մեկնաբանված է նաև «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը՝ հետևյալ եզրահանգմամբ. «Եվ այսպես, մեծ լուսավորչի քաղաքակրթական հայտնությունը՝ գրերի գյուտը՝ խորհրդանշում է

հայոց պատմության իմաստությունը, շնորհում նրան հոգևոր հանճարի այն ներքին տրվածքը, որով նա դիմագրավում է դարերի փորձությանը, նորոգվում հավատով և մտավոր իր թռիչքը հասցնում բանականության համաշխարհային հայտնություններին: «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը հզոր տաղանդի ստեղծագործություն է, ուր գեղարվեստական մտածողությունը հասնում է փիլիսոփայական անսովոր խտացման»¹⁸:

Մարգարեական պատգամ է պոեմի վերջին հատվածը, որը բանաստեղծն ուղղում է հետագա հայ սերունդներին.

*Այսինքըն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց,
Թե հրաշք չկա՛,
Այլ կա լոկ կարի՛ք:
Այսինքըն՝ Ա՛յր մի, որ ապացուցեց
Եվ կոչ է անում ապացուցելու,
Որ այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,
Ուր վերջանում է ամեն մի հնար... (էջ 264)*

Եզրակացություն


Պ. Սևակը «Եվ այր մի՛ Մաշտոց անուն» պոեմը գրել է այն ժամանակ, երբ նրա անունը ժամանակակից գրականագետները դնում էին դասական հայ գրողների կողքին: Արդեն Սևակին գիտեին թե՛ սփյուռքում և թե՛ մայր հայրենիքում, որովհետև 1959 թ. լույս էր տեսել հանճարեղ Կոմիտասին նվիրված «Անլուելի զանգակատուն» պոեմը, ուր հզոր ձևով դատապարտվում է 1915 թ. երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանությանը և հայերի հայրենագրկումը:

Պոեմից հստակ երևում է, թե որքան խորը գիտի Սևակը հայ ժողովրդի պատմությունը թե՛ պատմիչների բնագրերով և թե՛ գիտական գրականությամբ: Նա քաջատեղյակ է հեթանոսական հայ կրոնին, մշակույթին, մեհենական գրականությանը, միաժամանակ խոր-

¹⁸ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 1, Երևան, 1972, էջ XX:

քային գիտելիքներ ունի հայ միջնադարյան քրիստոնեական գրականությունից:

Պատահական չէ, որ մեր հոդվածը սկսել ենք հույն նշանավոր փիլիսոփա Պլատոնի՝ տառերի գյուտին վերաբերող ասույթով: Սևակն ապացուցում է, որ հայերի համար հանճարեղ Մեսրոպ Մաշտոցը պաշտվել է իբրև Աստված: Մեզ թույլ ենք տալիս ասելու, որ աստվածային հանճարով օժտված Մաշտոցին փառաբանող Սևակի պոեմը նույնպես հանճարեղ է:



ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

*Խ. Արուլյանի անվան ՀՊՄՀ
հայ հին և միջնադարյան գրականության
և նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի դոցենտ,
Մանկավարժական գիտությունների
թեկնածու*

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԱԽՈՍ

Ներածություն

Հրապարակախոսությունը, որպես գրական տեսակ, հին ծագում ունի: Այն խիստ տարածված էր հին Հունաստանում և Հռոմում: Բավական է հիշել Հռոմի փիլիսոփա կայսր Մարկոս Ավրելիոսի հրապարակախոսական գործերը, որոնք այսօր էլ չեն կորցրել իրենց հասարակական արժեքը: Հայ միջնադարյան գրականության մեջ հրապարակախոսությունը ևս գտավ իր պատվավոր տեղը՝ հանձնա այն կարևոր թղթերի, որոնցով մատենագիրները կամ հասարակական գործիչները դիմում էին հասարակությանը: Այսպիսի թղթեր գրել են Գրիգոր Մագիստրոսը (XI դար), Ներսես Շնորհալին (XII դար):

Հրապարակախոսությունը XVIII-XIX դարերում լայն կիրառություն ուներ Եվրոպայի զարգացած երկրներում, Ռուսաստանում:

Հայ դասական հրապարակախոսները դարձան Ստեփանոս Նազարյանցը և Միքայել Նալբանդյանը: Վերջինիս «Երկու տող», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» հրապարակախոսական դասական երկերն աչքի են ընկնում իրենց համարձակությամբ ու կյանքի ստվերոտ կողմերը վերացնելու վճռականությամբ: Նալբանդյանը գրում է. «Ռեֆորմ պահանջում ենք եկեղեցականների կրթության

ու դաստիարակության մեջ: Քահանա ունինք, որ կարդալ չգիտե, քահանա ունինք, որ հայերեն չէ կարող խոսել»¹:

Կրքոտ հրապարակախոս էր Գրիգոր Արծրունին, որն իր հրապարակախոսական գործերը տպագրում էր «Մշակ»-ի էջերում:

Չմոռանանք Հովհաննես Թումանյանի հրապարակախոսությունը, որը լայնածավալ էր ու վերաբերում էր իր ապրած ժամանակի ամենատարբեր բնագավառներին: Հայ դասական գրողները XIX դարի վերջին և ողջ XX դարում իրենց գրիչը նվիրել են հրապարակախոսությանը:

Հենց մեր օրերում Հայաստանի գրողների միության պաշտոնաթերթում («Գրական թերթ») տպագրվում են մերօրյա գրողների բազմաթիվ հրապարակախոսական հոդվածներ՝ նվիրված ամենատարբեր թեմաների:

Պարույր Սևակը ևս ունի մի շարք խիստ արժեքավոր հրապարակախոսական հոդվածներ: Չմոռանանք, որ նա հրապարակախոս էր նաև «Մարդը ափի մեջ» ժողովածուի մի շարք բանաստեղծություններում:

Պ. Սևակի բանաստեղծական հրապարակախոսությունը

Մի թե հրապարակախոսություն չէ «Մարդը ափի մեջ» ժողովածուի «Վարք Մեծաց» բանաստեղծությունը: Դրանում պարզ երևում է բանաստեղծի բազմագիտակությունը և դիրքորոշումը մարդկային կյանքի դժվար ճանապարհին: Այն սկսվում է հետևյալ խորիմաստ քառատողով.

*Ու՛շ-ու՛շ են գալիս, բայց ո՛չ ուշացած
Ծնվում են նրանք ճիշտ ժամանակին:
Եվ ժամանակից առաջ են ընկնում,
Դրա համար էլ չեն ներում նրանց՝*

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու վեց հատորով, հտ. 4, Երևան, 1983, էջ 20-21:

² Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 1, Երևան, 1972, էջ 322: Այսուհետ այս հատորից մեջբերվող էջերը կնշվեն վերևում- Գ.Մ.

Ժամանակից առաջ ընկածի պատիվը հայ իրականության մեջ պատկանում է Խաչատուր Աբովյանին:

Սևակը հիանալի գիտեր անտիկ մշակույթը, համաշխարհային գրականության մեծերին: Դրանք հիշատակվում են այս ոչ ծավալուն բանաստեղծության մեջ: Նա հիշում է հույն Դիոգենեսին, որն ապրում էր տակառում և ուտում խաշած ճակնդեղ: Հիշում է հունական առասպելաբանության գեղեցիկ պատանուն, որը զմայլված էր իր գեղեցկությամբ և դարձավ ծաղիկ: Չի մոռացվում նաև Մենֆիստոֆելը, որը հոգին ծախեց սատանային:

Հասարակությունը դեպի առաջընթաց մղող անհատները հայտարարվում են օրենքից դուրս: Հանուն իրեց գաղափարների նրանք չեն վախենում մահից.

Ով սահմանում է նոր օրենք ու կարգ՝

Հայտարարվում է և օրենքից դուրս:

Բայց չէ՛ն վախենում նրանք չար մահից.

Ապրում են դժվար ու մեռնում են հեշտ... (էջ 323)

Այստեղ տեղին է հիշել Մ. Նալբանդյանի խոստովանությունը «Երկու տող» հրապարակախոսության մեջ. «Պաշտպանել այն հայի առաթուր կոխված իրավունքը է մեր կյանքի բուն խորհուրդը և նպատակը: Եվ այս նպատակին հասնելու համար չէ պիտո ընկրկինք ոչ բանտի եւ ոչ աքսորի առաջ եւ ոչ միայն բանիվ եւ գրչով, այլեւ զենքով եւ արյունով, եթե մի օր արժանի լինինք զենք առնուլ մեր ձեռքը եւ մինչեւ այժմ քարոզած ազատությունը նվիրել եւ սրբել մեր արյունով»³:

Հրապարակախոսություն է «Բանաստեղծի կյանքը» փոքրածավալ գրվածքը: Իր հանդեպ լինելով խստապահանջ՝ Սևակը պարտադրում էր, որ բանաստեղծ կոչվեն նրանք, ովքեր իրենց ասելիքով չեն մոռացվում, ինչպես չի մոռացվում դարերի իմաստությունն իր մեջ խտացրած ժողովրդական առածը.

³ Մ. Նալբանդյան, Նշվ. աշխ., էջ 18-19:

*Թո՛ղ նրա կյանքը մինչև իսկ լինի
Մի շուտասելուկ և կամ հանելուկ,
Միայն թե դառնան խոսքերն էլ ... առած (էջ 324):*

Մարդկային կյանքը բարդ է, լի դժվարություններով, հոգսերով ու կորուստներով: Ուժեղ մարդը պետք է դիմանա այդ բոլորին և ի հեճուկս բոլոր ցավերի հասնի իր նպատակին: Ահա բանաստեղծի պատգամը. «Ցա՛վն է հաճախ առաջ մղում» (էջ 338):

Ամեն մասնագիտություն պահանջում է հմտություն և նվիրում: Հմտությամբ ու նվիրումով կատարած գործը դառնում է կատարյալ.

*Ես հոգնե՛լ եմ մանրաքանդակ պարզ խոսքերից:
Լավ է լինե՛լ հմուտ դարբին քան ոսկերիչ... (349):*

Ինչպես Գրիգոր Նարեկացին իր անունից ներկայացնում է համայն քրիստոնյա աշխարհը, այնպես էլ Սևակը հանձին իրեն ներկայացվող պահանջների նկատի ունի ողջ մարդկությանը: Մարդը, որ ծնվում է, պետք է լինի այնպիսի զավակ, որին մայրը շարունակ կարոտի, նա պետք է մխիթարի ցավածին, տուն երագող երիտասարդ զույգի համար դառնա տանիք: Եվ, ի վերջո, իր նվիրական գործերով լուսավորի մարդկանց կյանքը.

*Եթե շուրջս խավար լինի՝
Մարդկանց համար փայլատակեմ,
Հասակով մեկ փովեմ գետնին
Վհատության ճամփան փակեմ... (էջ 361):*

Իրական կյանքում ոչ բոլոր մարդիկ են լայնախոտ, համբերատար, ուրիշի հաջողությամբ ուրախացող, սեփական անձի թերությունները ընդունող, ուրիշի վշտերը հասկացող և միայն իր անձի համար չմտածող.

*Ապրե՛՛լ, ապրե՛՛լ, ապրե՛լ այնպե՛ս,
Որ նրանց հետ մթնե՛ս-ամպես
Եվ նրանց հետ շանթարձակվե՛ս*

*Մեկտեղ հանկարծ ընդարձակվես,
Մեկտեղ դառնաս գունդուկծիկ,
Մեկտեղ դ՛բացվես, մեկտեղ դ՛փակվես՝
Բնչպես նամակ և կամ բացիկ... (էջ 366)*

Նոր ծնվող գաղափարներն ի սպաս պետք է դրվեն մարդկության առաջընթացին, իսկ ամեն նորը պետք է ծնվի մարդասիրության պահանջներից և ոչ թե հորինվի ինչ-ինչ նպատակների համար.

*Գովերգում եմ ես այն լավը,
Որ մեռնում է նրա մասին չցավելուց,
... Գովերգում եմ և այն լուսե գաղափարը,
Որ չի դառնում նեղ կաղապար,
Այն կասկածը, որ ծնվում է հեզնոդ ցավով,
Հետո դառնում մի անկասկած ճշմարտություն
Ու բաց անում նոր ճանապարհ... (էջ 372):*

Խորիմաստ է «Ատում եմ» բանաստեղծությունը: Բանաստեղծն ատում է մահը, որ հյուր է գալիս աղջկատեսին, ատում է նրանց, ովքեր քանդում են ուրիշի տունը՝ իրենց պետք եկած գերանի համար, ատում է այն մարդկանց, որոնք իբրև թե գործ են անում, սակայն իրականում գործում են ծանր հանցանք: Ատում է հատկապես այն դավանանքը, որը փոխվում է ցավի: Ատում է այն խավարը, որի ընթացքում ոչ կարևոր միտք է ծնվում և ոչ էլ զավակ: Շատ ժամանակակից է հնչում այն միտքը, թե երբեմն տարեգիրները իրական փաստը փոխում են ու ներկայացնում իրենց հորինածը, նաև խղճալի են այն տարեգիրները, որոնք ինքնակամ լքում են հայրենիքը, սակայն մտովի միշտ ապրում են հայրենիքում, նաև ատելի են մանվածապատ այն մտքերը, որոնք կարդացվում են, սակայն չեն հասկացվում.

*Բնչ խոսքեր ասեմ այն ձեռագրորին,
Որ չի հասկացվում, բայց կարդացվում է,
Ատե՛մ, թե խղճամ այն տարեգրորին,
Որ նյութ է սարքում,*

Ոչ թե հավաքում:

*Խղճա՛մ, թե ատեմ այն տարագրրին,
Որ միշտ ապրում է...իր հայրենիքում...
Թու՛հ, ինչքա՛ն բան կա կյանքում ատելի,-
Ես չգիտեի... (էջ 380):*

Շատ սեղմ է բանաստեղծի հավատո հանգանակը: Նրա անվերապահ համոզմամբ ամեն ճշմարիտ արվեստագետ պետք է սեփական ասելիքն ունենա, այլապես նա կդառնա ուրիշների ստվերը:

*Ես էլ հավատո հանգանակ ունեմ,
Որ կարճ լինելով
Դյուրին է հիշվում:
Հավ է չունենալ կյանքում տուն ու տեղ
Քան թե արվեստում լինել... տնփեսա... (էջ 480):*

Հրապարախոսական հոդվածները

Պ. Սևակի հրապարակախոսական հոդվածներից մեկն ավելի քան արդիական է: Այն համահեղինակ ունի նշանավոր միջնադարագետ Ասատուր Մնացականյանին: Սևակը նույնպես միջնադարագետ է և հայ միջնադարյան գրականության վերաբերյալ ունի գիտական հոդվածներ: Նրա ծավալուն հետազոտություն-գիրքը նվիրված է ուշ միջնադարի հանճարեղ բանաստեղծ-աշուղ Մայաթ-Նովային:

Ա. Մնացականյանի ու Պ. Սևակի համատեղ հոդվածը⁴ ռուսերեն է և ուղղված է ադրբեջանցի պատմաբան Զիա Բունիաթովի՝ հայ միջնադարյան գրական գործերը նենգափոխելու, Մեծ Հայքի պատմական տարածքները՝ Արցախ, Գարդման, Սյունիք, Նախիջևան Ադրբեջանի տարածքներ հայտարարելու դեմ: Այն ծավալուն է և սպառիչ պատասխաններ է պարունակում բոլոր հարցադրումների վերաբեր-

⁴ А. Мнацаканян, П. Севак, По поводу книги З. Буниятова «Азербайджан в VII-X вв.», «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1967, թ. 1, էջ 177-190:

յալ: Ավելին, Ա. Մնացականյանը 1969 թ. Երևանում հրատարակում է ծավալուն ռուսերեն մի հետազոտություն⁵:

Զիա Բունիաթովն իր գրքում միտումնավոր գլխովին շրջել է հայ ժողովրդի պատմությունը՝ փաստերը բխեցնելով իր նվաճողական խիստ մղումներ ունեցող երևակայությունից: Նա հայերին մեղադրում է բռնությամբ Աղվանքի ժողովրդին հայ առաքելական եկեղեցու պաշտամունքին դարձնելու, այսինքն դավանափոխ անելու մեջ: Մինչդեռ հայտնի է, որ Աղվանքի եկեղեցին իր ստեղծման օրից միշտ եղել է լուսավորչական: Բունիաթովն ասում է, թե հայոց եկեղեցին «...стирала на своем пути народы исторической Албании» /«ջնջել է իր ճանապարհին Աղվանքի ժողովուրդներին»/⁶:

Հայտնի է, որ Մեսրոպ Մաշտոցի ստեղծած աղվանական այբուբենով մեզ չի հասել թեկուզ մեկ թերթ ձեռագիր: Աղվանական այբուբենը պահպանված է Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 7117 ձեռագրում, որի գրիչներն են Հովհաննես Արճշեցին և Թովմա Մեծոփեցին: Այդ ձեռագրում պատկերված են հայերի, եբրայեցիների, հույների, արաբների, հռոմեացիների, վրացիների, աղվանների, ղաչիների, հնդիկների տառերը⁷:

Բունիաթովը պատմական Մեծ Հայքի Արցախ, Ուտիք, Գարդման նահանգներում ծնված հայ միջնադարի բոլոր մատենագիրներին համարում է աղվանացի: Իբր թե հայերը նրանց գրքերը թարգմանել են հայերեն, ապա արագորեն ոչնչացրել նրանց աղվանական բնագրերը: Այդպես Աղվանքի մատենագիրներ են դառնում Մովսես Կաղանկատվացին, Դավթակ Քերթոզը, Մխիթար Գոշը, Կիրակոս Գանձակեցին և այլք: Եթե Մ. Կաղանկատվացին «Աղվանից աշխարհի պատմությունը» գրել է աղվաներեն, ապա, ինչպես ճշգրտորեն նկատում են հոդվածի հեղինակները, դրա մեջ կարող էր երևալ բնագրի լեզվի որևէ հետք: Այն իսպառ գոյություն չունի: Կաղանկատվացին ոչ

⁵ А. Мнацаканян, О литературе Кавказской Албании, Ереван, 1969, 219 с.

⁶ А. Мнацаканян, П. Севак, Նշվ. աշխ., էջ 180:

⁷ Ա. Դոլուխանյան, Ժան-Պիեռ Մահեն հայագետ, Երևան, 2020, էջ 84-85:

միայն ազգությամբ հայ է և հայ պատմիչ, ավելին նա մի շարք քաղ-վածքներ ունի հայ պատմիչներից: Եթե նա գրել է աղվաններեն, ապա հայ պատմիչներից բերված կտորները նորից հայերեն թարգմանվելիս պետք է տարբերություն ունենային հայկական բնագրերից: Մինչդեռ նման բան չկա: Բունիաթովը մոռանում է, որ թե՛ Գոշը և թե՛ Գանձա-կեցին նշում են իրենց ազգությամբ հայ լինելը: Մ. Գոշը Հայաստանում ապրած ժամանակահատվածում եղել է անվերապահ մեծություն, նա նաև նշանավոր Զաքարե ամիրսպասալարի խոստովանահայրն էր:

Հոդվածում կարդում ենք. «Մխիթար Գոշը, իհարկե, չէր կարող իմանալ, որ 750 տարի հետո հանդես կգար Զ. Բունիաթովը և իրեն՝ նշանավոր հային ու հայ եկեղեցու կրկնակի վարդապետին, հայ մեծ օրենսդրին ու առակագրին, կդարձնի աղվան»⁸:

Կիրակոս Գանձակեցին իր պատմության մեջ մի քանի անգամ կրկնում է «մեր հայ ժողովուրդը», «մեր Հայաստան երկիրը» և այլն⁹:

Բունիաթովն իր ցանկությունն իրականացնելու համար, հան-գիստ ձևով հայ մատենագիրներին դարձնում է աղվան: Նա հաշվի չի նստում որևէ փաստի հետ: Հայտնի է, որ VII դարի բանաստեղծ Դավ-թակ Քերթոզն իր «Ողբք ի մահն Զեւանշիրի մեծի իշխանին» գործը գրել է հայերենի այբբենակապով՝ Ա-ից մինչև Ք: Հայտնի է, որ Մաշ-տոցի այբուբենն ունի երեսունվեց տառ, իսկ աղվանականը՝ հիսու-ներկու տառ: Եթե այդ Ողբը թարգմանվել է հայերեն, ապա անհնար էր պահել այբբենակապը: Տեսնենք Ողբի առաջին և վերջին տները.

Ա-Ի տուն

*Աստուածային բանին արուեստաւոր հոգի,
Յորինեա՛ իմաստիւ զտխրական երգմունս,
Ջի սգալի ձայնիւ անդադար ողբասացոյք
Ի վերայ դժնդակ կորստեանս մերոյ¹⁰:*

⁸ А. Мнацаканян, П. Севак, Նշվ. աշխ., էջ 182:

⁹ Նույն տեղում, էջ 183:

¹⁰ Դավթակ Քերթոզ, Ողբք ի մահն Զեւանշիրի մեծի իշխանին, Երևան, 1986, էջ 47:

Ք- վերջին տուն

Քաղցր էր գայս ասել եւս ես միշտ հեծել,

Բայց քաղցրագոյն եւս ընդ քեզ մեռանել¹¹:

Ակադեմիկոս Լեոն Մկրտչյանը շատ ճիշտ է բացատրում, թե ինչու պետք է հայ բանաստեղծ Դավթակ Քերթոզը գրեր այս Ողբը. «Հայաստանը շահագրգռված էր Աղվանքի ուժեղացումով, որովհետև Աղվանքի մեջ էր մտնում Հայաստանի մի մասը, և որովհետև Աղվանքում եկեղեցին հայկական էր, ոչ քաղկեդոնական, որ նույնպես ուժեղացնում էր Հայաստանն ու նրա կապերը իրենից անջատված հյուսիսարևելյան շրջանների հետ»¹²:

Բունիաթովն Աղվանք, բնականաբար, Աղրբեջան է հռչակում Հայաստանի պատմական տարածքները: Հռչակածում կարդում ենք. «Համենայնդեպս, եթե Սյունիքը Աղվանք է և Սյունիքի լեզուն աղվաներենը, այնժամ հարցնենք, ապա ինչ անենք VII դարի պատմիչ Ստեփանոս Սյունեցուն՝ նշանավոր մատենագրին, թարգմանչին, քերականին ու Սյունիքի լեզվաբանին, որն իր գործերում խորհուրդ է տալիս, թե ինչ ձևով պետք է գրել հայերեն»¹³:

Եթե Բունիաթովը խոսում է աղվանական ձեռագրերի հայերի կողմից ոչնչացման մասին, ապա ինչու չի հիշում, որ 1126 թ. թուրք ամիրան Կապանի մոտ գտնվող հայկական վանքում ոչնչացնում է հավաքված բազմաթիվ ձեռագրերը: Թուրքերը 1170 թ. վերստին հարձակվում են Բաղքի անառիկ բերդի վրա, տանում տասը հազար ձեռագիր ու ոչնչացնում¹⁴: Բունիաթովը գրում է. «Ոչնչացնելով Արանի /Աղվանքի/ գրական հուշարձանները՝ լուսավորչական հոգևորականները դրանք նախապես թարգմանում էին գրաբարով»: Սրան ի պատասխան՝ հռչակածում ասվում է. «Ուղղակի ապշում ես: Ոչնչացնել մատենագրական հուշարձանները, նախապես դրանք թարգմանելով

¹¹ Նույն տեղում, էջ 117:

¹² Նույն տեղում, էջ 15:

¹³ А. Мнацаканян, П. Севак, Նշվ. աշխ., էջ 186:

¹⁴ Նույն տեղում, էջ 187:

քո լեզվով, դա չտեսնված երևույթ է համաշխարհային պատմության մեջ: Բունիաթովը՝ այդ շշմեցուցիչ հայտնագործությունների հեղինակը, գուցե մեզ ցույց տա ևս մեկ նման օրինակ մարդկության պատմության մեջ»¹⁵: Հոդվածի վերջին մասում բերվում է Հուլիոս Կեսարի խոսքը. «Մարդիկ հակված են հավատալու այն բանին, ինչը իրենք ցանկանում են»¹⁶:

Հրապարակախոսական արժեք ունի Սևակի «Դեպի մեծ ուղեծիր» հոդվածը՝ գրված 1961 թ.: Այն սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Չկա ավելի խոր զգացում, քան հայրենասիրությունը»: Հոդվածի բովանդակությունը բացատրությունն է առաջին նախադասության: Չմոռանանք, որ խորհրդային տարիներին ինչ-որ առումով արգելված էր լիաբերան հայրենասիրության մասին խոսելը:

Ըստ Սևակի՝ իսկական հայրենասիրական բանաստեղծություն գրելը հեշտ չէ, և այդ ձիրքն ամենքին տրված չէ: Հայրենասիրության մասին բանաստեղծությունը չպետք է իջնի պարզունակության աստիճանի¹⁷:

Սևակը հրաշալի գիտեր դասական համաշխարհային գրականությունը: Նա գրում է. «Մենք Ավետարանի աղքատ Ղազարը չենք: Մենք կտակառու ենք մի վիթխարի ժառանգության՝ Հոմերոսից մինչև Բյուզ, Մայակովսկի, Չարենց, Էյլուար: Եվ նման չենք տափաստանային այն բույսին, որին ռուսները կոչում են «перекати-поле», իսկ մենք պիտի թարգմանենք «ղաշտագլոր», բույս, որ քամուց տեղից-տեղ է քշվում հենց այն պատճառով, որ թույլ արմատներ ունի: Մեր արմատները թերևս խորն են ավելի, քան բարձր է մեր սաղարթը»¹⁸:

Սևակը հիանալի գիտեր հայ ժողովրդի պատմությունը. նրա ստեղծագործությունն իր հիմքում ուներ մեր ազգի բազմադարյան

¹⁵ Նույն տեղում, էջ 188:

¹⁶ Նույն տեղում, էջ 189:

¹⁷ Պ. Սևակ, Երկեր երեք հատորով, հտ. 3, Երևան, 1983, էջ 16:

¹⁸ Նույն տեղում, էջ 17:

պատմությունը: Դրա համար էլ, որպես պատգամ, հոդվածի վերջում ասում է. «Ով անցյալ ունի՝ չի կարող հիշողություն չունենալ»¹⁹:

«Պահպանենք և հարստացնենք մայրենին» հոդվածը նվիրված է հայերենի նկատմամբ մեծ սեր ունենալու խնդրին: Այն գրվել է 1962 թ.: Մայրենին Սևակը համարում է ոչ միայն ազգային սրբություն, այլև սրբության սրբոց՝ ինչպես մայրը: Մայրենին, որպես մոր, պաշտել են Մաշտոցը, առաջին թարգմանիչները, այդ սերը փոխանցվել է Գրիգոր Նարեկացուն, Ներսես Շնորհալուն, Պետրոս Դուրյանին, Բաֆֆուն, Դանիել Վարուժանին, Եղիշե Չարենցին:

Սևակը կատարում է մի կարևոր դիտարկում: Խորհրդային տարիներին Հայաստանում հայագիտությունը մեծ նվաճումների է հասել: Այդ առաջընթացն արտասահմանի բարեկամների սրտերում առաջացնում է բերկրանք: Բարձրագույն ուսումնական հաստատությունները, Հայաստանի ազգային ակադեմիան հայագիտությունը վերադարձրին հայրենիք: Մինչ այդ, հայագիտությունը դեգերում էր օտար ափերում՝ Վենետիկ, Վիեննա, Մոսկվա, Թիֆլիս, Պոլիս, Բաքու²⁰:

Սևակին մտահոգում է օտարալեզու բառերի հայերեն թարգմանությունը: Դրանցից մեկն է «ռնոյուցիան», որը պետք է հնչի հայերենով՝ «հեղափոխություն»: Նա նշում է խորհրդային տարիներին հայ մտավորականության խոսքի մեջ տեղ գտած մի իրողություն: Առավել զարգացած թվալու համար ոմանք իրենց խոսքում օգտագործում էին ռուսերեն բառեր, այն դեպքում, երբ կային նրանց հայերեն համարժեքները: Նա գրում է. «Եթե մեր նախնիներն այնպես վարվեին, ինչպես մենք ենք անում վերջին տարիներս, ապա մեր մանուկներն այսօր պիտի չգիտենային այնպիսի բառեր, որպիսիք են՝ թվաբանություն, հանրահաշիվ, երկրաչափություն, եռանկյունաչափություն, բնագիտություն, աշխարհագրություն, կենսաբանություն, աստղաբաշխություն, բուսաբանություն, կենդանաբանություն և այլն-գիտութ-

¹⁹ Նույն տեղում, էջ 18:

²⁰ Նույն տեղում, էջ 20:

յան ճյուղեր»²¹: Սևակի այս հարցադրումով պարզ է դառնում, որ հայերենի մաքրության խնդրում եղել է պետական հոգատարություն՝ գիտակ ու հայրենասեր մտավորականների շնորհիվ: Փաստորեն հաղթել է Վենետիկի Մխիթարյան հայրերի ձգտումը՝ հայերենը հարստացնել թարգմանված բառերով:

Հիշենք՝ մեր պաշտելի բանաստեղծ Վահան Տերյանը «Հայ գրականության գալիք օրը» հայ գրականության համար շրջադարձային ընդարձակ գեկուցման մեջ քննադատում է Մխիթարյան հայրերին օտար բառերը հայացնելու մեջ: Այս գեկուցումը կարդացվել է 1914 թ.: Դրանում Վ. Տերյանն ասում է. «Լեզուն կուլտուրայի ամենաձգրիտ ու անսխալական նշանացույցն է»²²:

«Թրի դեմ՝ գրիչ» հրապարակախոսությունը նվիրված է Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին: Այն փաստորեն իր գրած «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմի յուրօրինակ մեկնաբանությունն է՝ պոեմից մեջբերվող բազմաթիվ հատվածներով: Սևակը Մաշտոցին համարում է այն մարդը, որ եկավ պատասխանելու մեր ժողովրդի առաջ ծառացած հարցին. «Լինե՞լ, թե չլինե՞լ»: Եվ նա ասաց. «Լինե՛լ»²³:

«Ազգային սնապարծություն և ազգային արժանապատվություն» հոդվածը գրված է 1966 թ.: Սևակը իրավացիորեն զգուշացնում է հեռու մնալ ազգային սնապարծությունից. «Թույլ տվեք հիշեցնեմ մի շատ իմաստուն խոսք. «Ազգը չի կարող կործանվել այլ կերպ, բացի ինքնասպանությունից»²⁴:

Թվում է, թե 1915 թ. ազգասպանության աննախադեպ փաստը պետք է աշխարհի երեսից ջնջեր հայի տեսակը: Սակայն չար ուժերը չկարողացան, որովհետև հայերը չուզեցին ինքնասպան լինել: Մինչդեռ հայ իրականության մեջ գտնվում են ուժեր, որոնք հանգստանում

²¹ Նույն տեղում, էջ 25:

²² Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հտ. 2, կազմ. և ծանոթագր.՝ Վ. Պարտիզունի, Երևան, 1961, էջ 283:

²³ Պ. Սևակ, Երկեր երեք հատորով, հտ. 3, էջ 41:

²⁴ Նույն տեղում, էջ 51:

են ու պարծենում մեր նախնիների ձեռք բերածով ու չեն մտածում ապագայի, նոր ձեռքբերումների մասին:

Սևակն իրավացի է. կենսական մեծ առաջընթաց են ունենում այն ժողովուրդները, որոնք շարունակ առաջադիմելու նպատակ ու եռանդ ունեն. «Մենք որ Պլատոն էինք թարգմանում՝ նրանք ապրում էին ծառերի վրա: Իսկ հապա մեր Այսինչը, մեր Այնինչը, մեր Էսը, մեր Էնը...»:²⁵

Հայրենասիրության այս տեսակը Սևակը համարում է մի քնաբեր հաշիշ, փափուկ բարձ, որը վտանգավոր է ազգի ապագայի համար: Նա մատնացույց է անում ազգերի, մանավանդ փոքրաքանակ ժողովուրդների առաջընթացի իրական ուղին: Հարկավոր է ընթանալ համամարդկային քաղաքակրթությանը համաքայլ, աշխարհի առաջադեմ երկրներից հետ չմնալ. «Մենք իրավունք չունենք ուշանալ պատմության գնացքից կամ օդանավից»²⁶: Սևակը հիշեցնում է Մաշտոցի քաղաքական, պատմական ու մշակութային սխրանքը. «Մենք պարտավոր ենք շահել շախմատային այն խաղը, որ սկսել ենք ոչ թե մենք, այլ Մեսրոպ Մաշտոցը»²⁷:

Շարունակական զարգացումը, ազգի կատարելագործումը, նորացումը, ձեռք բերածով չբավարարվելը, աշխարհի ժողովուրդների մեջ կապահովի հայ ազգի արժանապատվությունը. «Այստեղ է ահա, որ ես պիտի դառնամ ազգային արժանապատվության հարցին և այստեղ է, որ ես բաց ճակատով և լեցուն հպարտությամբ պիտի վկայեմ, որ ես հայ եմ՝ զավակը մի ժողովրդի, որ իրոք շատ բան է տվել աշխարհի քաղաքակրթությանը և տվածի մեջ էլ՝ ինձ համար ամենաթանկն ու ամենագեղեցիկը՝ իր այն այլասիրական ոգին, որ եվրոպացիք ալտրոսիզմ են կոչում»²⁸:

²⁵ Նույն տեղում, էջ 52:

²⁶ Նույն տեղում, էջ 55:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, էջ 57:

Սևակը ցավով է արձանագրում, որ հայերը մեծ շուքով նշում են թե աշխարհի և թե Խորհրդային Միության ժողովուրդների նշանավոր գրողների հոբելյանները: Դրանցից մեկը վրաց մեծ բանաստեղծ Շոթա Ռուսթավելին է, որի հոբելյանը Երևանում նշվեց փառավոր ձևով: Սակայն Ռուսթավելուց 200 տարի առաջ արարչագործել է Նարեկացին, որն ազգային սնապարծության ոլերիմ թշնամիներից մեկն էր:²⁹ Նարեկացու հանճարը ընդունում են XX դարի համաշխարհային գրականության շատ դեմքեր: Համաշխարհային հռչակ ունի Մովսես Խորենացին՝ հայ հանճարեղ պատմահայրը: Սևակը տարակուսում է նրա հոբելյանը նշվելու առթիվ. «Վաղը-մյուս օր լրանում է Մովսես Խորենացու ծննդյան 1500-ամյակը. ա՛յն Խորենացու, որի «Պատմությունը», հակառակ Նարեկացու «Մատյանի»,³⁰ վաղու՛ց թարգմանվել է աշխարհիս բոլոր քաղաքակիրթ լեզուներով, որովհետև հիրավի ունի միջազգային արժեք: Կնշե՞նք այս հոբելյանը»³¹: Նույն հոդվածում Սևակը բարձրացնում է թարգմանական գրականության հետ կապված կարևոր խնդիրներ:

Պարույր Սևակի հրապարակախոսական հարցադրումներն առկա են նաև նրա գրականագիտական ու գրաքննադատական հոդվածներում:

Եզրակացություն

Պարույր Սևակը հրապարակախոսական փայլուն ձիրք ունի: Նրա «Մարդը ափի մեջ» ժողովածուն աչքի է ընկնում հրապարակախոսական բազում հարցադրումներով: Սևակը հայ համընդհանուր կյանքի բարելավման ջատագովն էր և դա անում էր որոշակի համոզվածությամբ, հայ հասարակության միջից կյանքի արատավոր գծերն արմատախիլ անելու նպատակով:

²⁹ Նույն տեղում, էջ 57:

³⁰ Այժմ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկը թարգմանված է բազմաթիվ լեզուներով: Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագիտություն, կազմ.՝ Ա. Ղափլանյան, Երևան, 2015- Գ. Մ.

³¹ Պ. Սևակ, Երկեր երեք հատորով, հտ. 3, էջ 57:

Նրա հրապարակախոսության մեջ երևում է հայ հրապարակախոսական մտքի հարուստ ավանդույթը: Որպես բազմագիտակ գրող, գրականագետ, թարգմանիչ ու գրաքննադատ ծանոթ էր համաշխարհային հրապարակախոսության ավանդույթին, սակայն ուներ իր սեփական ասելիքը: Մեծ գրողները մարգարեններ են. Սևակը դրանցից մեկն էր: Այդ է պատճառը, որ նա նշանավոր միջնադարագետ Ա. Մնացականյանի հետ ջախջախիչ հողվածով մերկացրեց Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները ներկայացնող պատմաբան Զիա Բունիաթովի «Ադրբեջանը VII-IX դդ.» գիրքը, որում հայ ժողովրդի պատմությունը և հայ միջնադարյան մատենագիրների կատարածը գլխիվայր շրջված էր, Հայաստանի պատմական տարածքները՝ Արցախ, Ուտիք, Գարդման, Նախիջևան, Սյունիք ներկայացված էին որպես ադրբեջանական տարածքներ, հայերը հայտարարված էին որպես Աղվանքի գրականությունը աշխարհի երեսից ջնջողներ:

Պ. Սևակը դեմ է ազգային սնապարծությանը, որը հատուկ է չգարգացած ազգերին: Նա միաժամանակ դնում է ազգային արժանապատվության խնդիրը, որը պահանջում է աշխարհին ներկայանալ հայ ժողովրդի մեծաքանակ մշակութային ու գիտական նպաստով: Սևակի հրապարակախոսությունը այսօր էլ արդիական է:



ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական
գրադարանի տնօրեն
Բանասիրական գիտությունների թեկնածու*

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ «ԱՆԼՈՒԵԼԻ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ» ՊՈԵՄԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Հայ գրականության պատմության մեջ Պ. Սևակ անունն ամրագրվել է վաղուց: Անհնար է խոսել 1940-1970-ական թվականների գրական շաժման և հայ գրականության ձեռքբերումների մասին՝ շրջանցելով մեծանուն բանաստեղծին և նրա ստեղծագործությունը, որովհետև հենց նա փոխեց և սկզբնավորեց գրական մի մեծ ուղղություն, որը հետո փորձեցին շարունակել շատերը:

Պ. Սևակի գրական ժառանգությունը խորքային է: Դժվար է առանձնացնել որևէ ստեղծագործություն և բնորոշել «ամենակատարյալ» տերմինով, քանի որ յուրաքանչյուրն ինքնատիպ և կարևոր է յուրովի: Սակայն երբ խոսքը վերաբերվում է «Անլուելի զանգակատուն» պոեմին, բոլորն անխտիր ընդունում են, որ այն Սևակի գրական ժառանգության առանցքն է, որովհետև «... ոչ միայն հայտնություն էր, այլև աշխարհայացքային շրջադարձ դեպի ազգային»¹:

Սևակի՝ բոլորին հայտնի այս պոեմը ընթերցողների և հետազոտողների ուշադրության կենտրոնում է հրատարակվելու պահից

¹ Ս. Սարինյան, Ի հեճուկս, Երևան, 2006, էջ 271:

սկսած: Դա են փաստում այն բազմաթիվ անդրադարձները, որոնք տպագրվել են թե՛ նրա կենդանության օրոք, թե՛ մահվանից հետո առ այսօր²: Դրանք բազմապիսի են և ամբողջության մեջ համապարփակ ներկայացնում են պոեմի կառուցվածքը, գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները, նախապատմությունը, ազգային և համամարդկային արժեքը և այլն: Այսքանով հանդերձ, պոեմը ամբողջական քննության նյութ չի դարձել տպագրության պատմության տեսանկյունից: Ինչպե՞ս կազմակերպվեց պոեմի տպագրությունը, ի՞նչ փուլերով անցավ, ինչպե՞ս հաղթահարվեցին գրախոսության խոչընդոտները, տպագրարվեստի ի՞նչ առանձնահատկություններ ունի և այլն... Նման հարցադրումներին տրվել են մասնակի գնահատականներ, ավելին՝ շատ փաստեր հստակեցվել են միայն հուշերի միջոցով:

Կա ևս մի կարևոր խոչընդոտ, որը նույնիսկ այսօր թույլ չի տալիս խնդիրը լուսաբանել համալիր ձևով: Դա բանաստեղծին և պոեմին առնչվող մի շարք արխիվային փաստաթղթերի բացակայությունն է կամ չհրապարակված լինելը: Բանաստեղծի երկերի ժողովածուներում քիչ կամ ընդհանրապես ընդգրկված չեն անձնական նամակները կամ պաշտոնական գրությունները, որոնք կարևոր բաղադրիչ են՝ նման հետազոտությունն ավարտին հասցնելու համար³:

Ինչևէ, համադրելով մեզ հասանելի փաստերը, ընթերցելով ժամանակակիցների հուշերը՝ սույն հետազոտության շրջանակում ներկայացնելու ենք Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի տպագրության պատմությունը:

² Գիտական անդրադարձների մեծ քանակի պատճառով այստեղ չենք առանձնացնում որևէ մեկը, քանի որ սույն հետազոտության շրջանակում ուսումնասիրվել են դրանք բոլորը: Հաջորդիվ կներկայացնենք միայն նրանք, որոնցից օգտվել ենք կամ մեջբերում ենք արել:

³ Առ այսօր հրատարակվել են Պ. Սևակի երկերի եռահատորյակը և վեցհատորյակը: Ապագայում բանաստեղծի երկերի ակադեմիական հրատարակությունը հնարավորություն կտա նոր լույսի ներքո ներկայացնել նրա գրական ժառանգությունը:

Կարծում ենք՝ յուրաքանչյուր սերունդ յուրովի է մեկնաբանում դեպքերն ու իրադարձությունները: Մեզ հասանելի հուշերի ու փաստերի վրա հիմնված այս ուսումնասիրությունը փորձ է՝ ներկայացնելու բավական ընդգրկուն մի թեմա, ահա ինչու վստահ ենք՝ առաջիկայում նոր փաստաթղթերի հրապարակվելուն զուգահեռ թեմային բազմիցս լինելու են անդրադարձներ:

Պոեմի տպագրության պատմությունը

«Անլռելի զանգակատուն» պոեմը գրելու մտահղացումը Սևակի մոտ ծնվել էր վաղուց: Լավագույն բնորոշումը տվել է հենց ինքը՝ բանաստեղծը՝ նշելով, որ պոեմը գրել է իր ողջ կյանքի ընթացքում, մտքի մեջ, գրել է թե՛ որպես վեպ, թե՛ որպես վիպակ, թե՛ որպես դրամա, ուսումնասիրություն և այլն⁴:

Իսկապես, Կոմիտասի կերպարը նրա ուշադրության կենտրոնում է եղել թե՛ պոեմի տպագրությունից առաջ, թե՛ հետո: Մինչ պոեմը, լույս էր տեսել «Եվս երկու տասնյակ տարի» բանաստեղծությունը (1949 թ.), «Ծխանի ծուխ» շարքը, «Նորից երգում, մորմոքում է...» ութ տողանոց բանաստեղծությունը⁵, որը գրվել էր Մոսկվայում 1956 թ. և որը կարող էր դառնալ պոեմի բնաբանը: Մինչ պոեմի հրատարակությունը, Սևակը մանրակրկիտ ուսումնասիրել էր հայոց պատմությունը՝ դրանով իսկ նպաստելով այս արժեքավոր երկի պատմական հիմքի ամրացմանը: Պոեմի տպագրությունից հետո էլ Կոմիտասը հանգիստ չի թողել բանաստեղծին, ինչի վառ ապացույցն է «Դիմանկարի ամբողջացման համար» վերնագրով հոդվածը⁶:

Բանաստեղծի վկայությամբ՝ պոեմը գրվել է Մոսկվայում՝ «...մի սարսափելի սառնամանիքային օր»⁷, երբ «...նոր էի վերջացրել «Մարդը ափի մեջ» ժողովածուն և հարյուրավոր ծխախոտներ ծխելուց հետո դուրս էի եկել սառնամանիքի մեջ մի բաժակ գարեջուր խմելու»: Ռա-

⁴ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 5, Երևան, 1974, էջ 392:

⁵ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 1, Երևան, 1972, էջ 201:

⁶ Պ. Սևակ, Դիմանկարի ամբողջացման համար, «Սովետական արվեստ», Երևան, 1961, թ.12, էջ 13-17:

⁷ Պ. Սևակ, Երկերի ժողովածու վեց հատորով, հտ. 5, էջ 392:

ղիոյով հնչում է Կոմիտասի երգը, որի ազդեցության տակ «...պարզ-վեց նախ՝ վերնագիրը՝ «Կոմիտասյան համանվագ», հետո՝ «Հայոց երգարան», հետո՝ «Զարմանալի զանգակատուն», հետո՝ «Անլռելի զանգակատուն», ապա նաև կառուցվածքը...»⁸: Տուն վերադառնալուն պես բանաստեղծը գրում է պոեմի հիմնական մասերը, որոնք հետո կառուցվածքային փոփոխության պատճառով տեղափոխվում են սկզբից վերջ: Դա 1957 թ. սեպտեմբերի 11-ն էր⁹: Պոեմի արարումը տևել է մինչև 1958 թ. նոյեմբերի 21-ը¹⁰: Այդ օրը ձեռագրի վրա Սևակը նշել է. «Մի թե ավարտեցի-հավատս չի գալիս...»¹¹:

Տքնաջան աշխատանքի արդյունքը միանշանակ պետք է տպագրվեր և հասանելի լիներ ընթերցողին, սակայն հենց այդ ժամանակ ի հայտ են գալիս խոչընդոտները: Վերադառնալով Երևան՝ 1959 թ. հունվարի 6-ին բանաստեղծը ձեռագիրը հանձնում է Հայաստանի պետական հրատարակչությանը¹²: Տպագրվելուց առաջ այն պետք է անցնէր խորհրդային գրաքննության պրիզմայով, քանի որ որևէ նյութ չէր կարող տպագրվել առանց պաշտոնական գրաքննության թույլտվության: Գրաքննության իրավունքը վերապահված էր մի շարք պետական հաստատությունների, առկա էր նաև պետական մարմինների հատուկ ուշադրությունը¹³: Որպես օրինակ՝ ներկայացնենք հետևյալը:

⁸ Նույն տեղում, էջ 393:

⁹ Պարույր Սևակ: Կենսամատենագիտություն, կազմ.՝ Ա. Արիստակեսյան, Երևան, 1983, էջ 19; Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ, Երևան, 1984, էջ 148:

¹⁰ Ըստ Լ. Արզումանյանի՝ պոեմի տպագրությունն ավարտվել է 1958 թ. նոյեմբերի 28-ին: Տե՛ս Լ. Արզումանյան, Պարույր Սևակի պոեմները, Երևան, 2001, էջ 144:

¹¹ Նույն տեղում, էջ 20:

¹² Նույն տեղում:

¹³ Պետհրատի կազմավորման և խորհրդային հասարակարգում գրաքննության ձևավորման մասին տե՛ս Հ. Սուքիասյան, Խորհրդային Հայաստանի Գլավլիտի կազմակերպումը, «Հայոց պատմության հարցեր», Երևան, 2016, թ. 17, էջ 241-252; Հ. Սուքիասյան, Խոսքի և մամուլի ազատության իրավական կարգավորումը Խորհրդային Հայաստանում 1920-1923 թթ., «Կանթեղ», Երևան, 2017, թ. 4, էջ 158-165:

1957 թ., երբ ուշանում էր Ս. Սարինյանի «Բաֆֆի» աշխատության տպագրությունը, Գիտությունների ակադեմիայի հրատարակչության տնօրեն Ս. Գևորգյանը հեղինակին ասում է, որ պետք է ունենա կուսակցական գրաքննական մարմնի թույլտվությունը, եթե ոչ գրավոր, գոնե բանավոր, հեռախոսով: Ս. Սարինյանը դիմում է Կուսկենտկոմի բաժնի վարիչ Գ. Հայրյանին, որը զանգում և հրահանգում է գրքի տպագրությունը¹⁴: Նույն գրքի շուրջ Կենտկոմում առանձին քննարկում է կազմակերպվել Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Թովմասյանի մասնակցությամբ, ուր դիտողություն է արվել ազգային և գաղափարական տերմիններ օգտագործելու համար¹⁵:

Նման օրինակները շատ են, և դրանք բոլորն ընդգծում են, թե ինչ վերաբերմունք կար այդ ժամանակ ազգային գաղափարախոսության նկատմամբ: Բնականաբար, պոեմը հրատարակչությանը հանձնելուց հետո Սևակի բանաստեղծական հովերը և ազգային մտածելակերպը բախվում են խորհրդային հասարակարգի կաղապարված կանոններին, որից էլ սկիզբ են առնում խոչընդոտները:

Պոեմին անդրադարձած բոլոր հետազոտողները շեշտում են մի կարևոր փաստ. այստեղ հատվել են ազգային գաղափարներն ու սովորույթները, Հայոց ցեղասպանությունն ու դրա նկատմամբ եղած անտարբերությունը, գաղափարներ, որոնք պատմության միջից եկել, հասել են մեզ և աղաղակում են մարդկային անարդարության դեմ: Սևակը պոեմը գրել է մի ժամանակահատվածում, երբ ազգային գաղափարները շատերը ստիպված էին թաքցնել, երբ Հայոց ցեղասպանության հետքերը դեռ շատ թարմ էին, բայց դրանց մասին բարձրաձայնելը՝ անթույլատրելի: Դրա վառ ապացույցն է հենց այն, որ Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրի կառուցումը հնարավոր է դարձել միայն 1967 թ.: Խորհրդային իշխանության կողմից պարտադրված այս իրականության մեջ գրել նման թեմայով, ավելին՝ հրատարակել, իհարկե, անհնարին էր թվում:

¹⁴ Ս. Սարինյան, Ի հեճուկս, Երևան, 2006, էջ 95:

¹⁵ Նույն տեղում:

Հաջորդ կարևոր խնդիրը բանաստեղծական հանգավորումն էր, որը շատերին խորթ էր թվում, նույնիսկ՝ անընդունելի: Սևակը հայ պոեզիա էր բերում նոր ուղղություն, որը, բնական է, պետք է բախվեր կարծրատիպերին և հաղթեր մեծ դժվարությամբ:

Հակիրճ ներկայացնելով վերոնշյալ խնդիրները՝ նշենք միայն, որ, այնուամենայնիվ, Հայպետհրատում ձեռագիրն ընդունում են¹⁶ և ուղարկում գրախոսության¹⁷: Ըստ Ս. Սարինյանի՝ մինչև 1959 թ. հունիս գիրքը գրախոսվում է երկու անգամ. երկու անգամ էլ տրվում է բացասական կարծիք¹⁸: Առանձնացվում են գաղափարական և ոճական դիտողություններ:

1959 թ. հունիսին պոեմից որոշ հատվածներ հրատարակվում են «Սովետական գրականություն» ամսագրում «Կոմիտաս»¹⁹ վերնագրով: Պետհրատը, որը դեմ էր բնագրի ամբողջական հրատարակությանը, ընդունելի է համարում ամսագրային տարբերակը, որը անցել էր գրաքննություն և կասկածի տեղիք չէր տալիս²⁰: Ամսագրային տարբերակի հայտնությունը, սակայն, երկրորդական չի դարձնում բնագրի ամբողջական հրատարակության խնդիրը: Այս մասին նորից փաստում է Ս. Սարինյանն իր հուշերով²¹: Նա նշում է, որ 1959 թ. գարնանը Պետհրատի գլխավոր խմբագիր Վահագն Մկրտչյանն իրեն

¹⁶ Պոեմի գաղափարական, գեղարվեստական, կառուցվածքային առանձնահատկություններին արդեն բազմիցս անդրադարձել են, և վերը նշված խնդիրների մասին առավել մանրամասն ներկայացված է մի շարք մենագրություններում: Այդ պատճառով, հողվածի սահմանափակ ծավալը նկատի ունենալով, գերծ ենք մնում այս հարցերի մանրակրկիտ վերլուծությունից:

¹⁷ Պոեմի գրախոսությունները կամ այս փուլին առնչվող որևէ փաստաթուղթ գտնելու մեր ջանքերն ապարդյուն էին, այդ պատճառով հենվում ենք միայն ժամանակակիցների հուշերի վրա:

¹⁸ Ս. Սարինյան, Ի հեճուկս, էջ 272:

¹⁹ Պ. Սևակ, Կոմիտաս (Հատվածներ պոեմից): Ծննդյան 90-ամյակի առթիվ, «Սովետական գրականություն», Երևան, 1988, թ. 6, էջ 88-128:

²⁰ Ս. Սարինյան, Ի հեճուկս, էջ 272:

²¹ Ս. Սարինյան, Ի հեճուկս, էջ 272-273; Ս. Սարինյան, Պարույր Սևակ, Երևան, 2006, էջ 162:

առաջարկում է գրախոսել պոեմը: Վերջինս գրույցի ընթացքում ընդգծում է, որ պոեմի շուրջ խոսակցություններ են սկսվել, որ Պետհրատը դիտավորություն չունի արգելելու այս տպագրությունը: Մասնակի դիտողություններով հանդերձ՝ Ս. Սարինյանի գրախոսությունն արժևորում է պոեմը՝ որպես հայ գրականության լավագույն գործերից մեկը²²: Նա տալիս է վերջնական եզրակացությունը, որ այն պետք է տպագրել առանց որևէ փոփոխության, այնպես, ինչպես կա:

Ս. Սարինյանի դրական կարծիքից հետո, երբ արդեն որոշվել էր գրքի տպագրության հարցը, հրատարակչությունը նորից ուզում է կրճատումներ անել, որին ի պատասխան՝ 1959 թ. հունիսի 5-ին բանաստեղծը նամակ է գրում՝ պնդելով, որ նոր փոփոխությունները ավելորդ են, քանի որ կրճատումներով տարբերակը հասանելի է ամսագրում. նորից նույնը տպագրելու կարիք չկա²³: Նա նույնիսկ պահանջում է այդ տեսքով գիրքը տպարան չուղարկել:

1959 թ. հուլիսի 22-ի գիրքը հանձնվում է տպարան, իսկ սեպտեմբերի 7-ին ստորագրվում է՝ տպագրությունը սկսելու համար:

Տպարան հանձնելուն զուգահեռ՝ 1959 թ. հուլիսի վերջին «Գրական թերթ»-ում տպագրվում է պոեմից ևս մեկ հատված՝ «Վանքի բաղում» վերնագրով²⁴:

Գիրքը տպագրվում է սեպտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածքում: Դա է փաստում այն, որ 1959 թ. դեկ-

²² Դիտողությունները վերաբերել են պոեմի հանգաբանական շեղումներին, բայց դրանք գրախոսը դիտարկել է ոչ թե որպես թերություն, այլ ստեղծագործական սկզբունք: Ինչպես վկայում է Ս. Սարինյանն իր հուշերում, իր գրախոսության օրինակն ինքը չի պահպանել: Ցավոք, այն չկարողացանք գտնել նաև արխիվային պահոցներում, այդ պատճառով չենք կարող նշել գրախոսության ամսաթիվը: Պ. Սևակն այդ ժամանակ Մոսկվայում էր, և գրախոսությունը զարմանք է պատճառել նրան, որովհետև Ս. Սարինյանին նա համարում էր «երդվյալ հակառակորդ»:

²³ Նամակը ներառված է Ա. Արիստակեսյանի մենագրության մեջ: Տե՛ս Ա. Արիստակեսյան, Նշվ. աշխ. Էջ 193:

²⁴ Պ. Սևակ, Վանքի բաղում, «Գրական թերթ», Երևան, 1959, թ. 31, 31 հուլիսի, էջ 2:

տեմբերի 4-ին առաջին անգամ անդրադարձ է լինում տպագիր տարբերակին՝ նշելով. «Վերջերս Պարույր Սևակը հանդես եկավ «Անլռելի զանգակատուն» ծավալուն պոեմով»²⁵:

Գիրքը տպագրվում է 5000 տպաքանակով՝ Հ. Մահյանի խմբագրությամբ: Ձևավորման աշխատանքների և նկարների պատասխանատուն նկարիչ Անուշավան Գասպարյանն էր:

Տպագրարվեստի տեսանկյունից այն կրում է Պետհրատի՝ այդ ժամանակահատվածին բնորոշ բոլոր առանձնահատկությունները: Քանի որ այս շրջանում ավելի շատ ուշադրություն էին դարձնում հրատարակչական գործին, գիրքը, բնականաբար, չունի տպագրության պատմության ավելի վաղ շրջանին բնորոշ առանձնահատկությունները:

Առաջին ծավալուն գրախոսությունը տպագրվում է 1959 թ. դեկտեմբերի 25-ին, որն սկսվում է հետևյալ տողերով. «Այն տաք վիճաբանությունները, որ ծայր առան Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի հրատարակությունից անմիջապես հետո և հավանորեն կշարունակվեն մամուլի էջերում...»²⁶: Մա փաստում է, որ Սևակի ստեղծագործական գլուխգործոցը շարունակում էր մնալ թեժ քննարկումների, կարծիքների կիզակետում:

Եզրակացություն

Կարող ենք եզրակացնել, որ Պ. Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմն ունեցել է ստեղծագործական բավական բարդ ու իրարամերժ պատմություն: Հեղինակը հաղթահարել է խորհրդային գրաքննության առաջադրած խոչընդոտները: Սրանով հանդերձ, պոեմի տպագրությանն առնչվող մի շարք փաստեր կարիք ունեն լուսաբանման, քանի որ անձնական նամակներն ու արխիվային փաստաթղթերը դեռ հանրայնացված չեն:

²⁵ Գրողի վեհ կոչումը, «Գրական թերթ», Երևան, 1959, թ. 49, 4 դեկտեմբերի, էջ 1:

²⁶ Ս. Աղաբաբյան, Ոգևորություն և վարպետություն, «Գրական թերթ», Երևան, 1959, թ. 52, 25 դեկտեմբերի, էջ 2:



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին
և միջնադարյան գրականության և
նրա դասավանդման մեթոդիկայի
ամբիոնի ասպիրանտ*

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿԻ «ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Ներածություն

Սայաթնովագիտության 170-ամյա պատմության մեջ ուրույն տեղ է զբաղեցնում Պ. Սևակի «Սայաթ-Նովա» ուսումնասիրությունը:

Գ. Ախվերդյան, Յա. Պոլոնսկի, Գ. Պատկանյան, Գ. Այվազովսկի, Գ. Ասատուր, Ն. Մառ, Ա. Խախանով, Ա. Լեյստ, Մ. Չերագ, Ա. Չոպանյան, Հ. Թումանյան, Գ. Բաշինջաղյան, Վ. Բրյուսով, Ի. Գրիշաշվիլի, Գ. Լևոնյան, Գ. Լեոնիձե, Լեո, Լ. Մելիքսեթ-Բեկ, Կ. Կեկելիձե, Մ. Աբեղյան, Ռ. Աբրահամյան, Մ. Հասրաթյան և շատ ուրիշներ արդեն իսկ զբաղվել էին Սայաթ-Նովայով, երբ Սևակը համարձակություն ունեցավ կրկին անդրադառնալու թեմային՝ իր տեսանկյունից քննելով Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործության մանրամասները:

Բանաստեղծական ասպարեզում իր կայուն տեղն ու դիրքը, ժողովրդական փառքն ու սերը վայելող հանճարը իր անսպառ աշխատասիրության և տաղանդի շնորհիվ ցուցադրում է գրականագետի ու գրաքննադատի նոր որակներ: «Հայ գրականությունը, պատմությունը, հասարակական ու փիլիսոփայական մտքի զարգացումը սկզբից մինչև մեր օրերը գիտեր մասնագիտորեն: Կարդացել ու յուրացրել էր հայ հին և միջնադարյան գրականության կոթողները առանց բացառու-

թյան, նրանց մասին հայ պատմաբանների, ինչպես և օտար հեղինակների գրած հետազոտությունները և ուսումնասիրությունները, և ինքնուրույն կարծիք կազմել պատմագրական շատ երևույթների մասին»¹։ Երևանի պետական համալսարանում սովորելու տարիներին միջոցառումների ընթացքում Պ. Սևակը հանդես է եկել հայ գրականության տարաբնույթ թեմաների մասին զեկուցումներով։ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրայում հայ հին և միջնադարյան գրականության մասնագիտացմամբ սովորելու տարիներին գրել է «Կարծեցյալ Շապուհ Բագրատունին և վաղ վերածննդի հարցերը Հայաստանում» թեմայով մենագրությունը, որը, սակայն, պատմական թեմաների հանդեպ խորհրդային կարգերի որդեգրած քաղաքականության հետևանքով չի պաշտպանվել։ Մոսկվայում՝ Մաքսիմ Գորկու անվան գրականության ինստիտուտում սովորելու տարիներին, բանաստեղծական գործունեությանը զուգահեռ շարունակել է ուսումնասիրությունները հատկապես հայ հին և միջնադարյան գրականության ասպարեզում։

Քննարկում

«Սայաթ-Նովա» աշխատանքի հրապարակային պաշտպանությունը տեղի է ունեցել 1967 թ. հունիսի 27-ին ՀՍՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում։ Ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսը եղել է պատմաբան, բանասեր, ԳԱԱ թղթակից անդամ Մորուս Հասրաթյանը, որն իր գրախոսականի վերջում առաջարկել է Սևակին թեկնածուի փոխարեն շնորհել գիտությունների դոկտորի աստիճան։ Նույն թվականին ատենախոսությունը՝ որպես մենագրություն, տպագրվել է առանձին գրքով և դարձել սայաթնովագիտությամբ զբաղվողների համար քննարկման նյութ։

Գրքի առաջին մասում հեղինակը նախ քննության է ենթարկում Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցը։ Այստեղ, մեջբերելով իրենից առաջ հանդես եկած գրականագետների նշած թվականները (ըստ սայաթնովագիտության հիմնադիր Գ. Ախվերդյանի՝ Սայաթ-Նո-

¹ Ա. Արիստակեսյան, Պարույր Սևակ։ Մենագրություն, Երևան, 1984, էջ 67-68։

վան ծնվել է 1712 թ.², վրացի գիտնական Կ. Կեկելիձեի կարծիքով՝ 1722 թ.³, Գ. Լևոնյանի տվյալներով՝ 1724 թ.⁴, Մ. Հասրաթյանի եզրակացությամբ՝ 1717 թ.⁵, և այլն), Պ. Սևակը գրում է. «Նույն ժամանակաշրջանի իմ պրպտումները բերեցին այն եզրակացության, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722 թ.»⁶: Հեղինակը տասից ավելի փաստ և ապացույց է բերում՝ հաստատելու, թե ինչու՞ Սայաթ-Նովան պետք է ծնված լինի 1722 թ., և ոչ թե 1712 թ., 1713 թ. 1717 թ. կամ այլ թվականին: Նա քննության է առնում Սայաթ-Նովայի ինքնակենսագրական տվյալներ պարունակող խաղերը՝ տաղաչափական վերլուծություններ կատարելով, լեզվաբանական քննության ենթարկում մի քանի տեղ հանդիպող «Հաբեշ» բառը, մաթեմատիկական հաշվարկներով ապացույցներ փնտրում արաբական այբուբենի թվային արժեքներում, մեջբերումներ կատարում պատմությանը հայտնի Նադիր շահի արշավանքներից, Իրանե Բագրատիոնի «Կալմաստբա» գրքում հանդիպող Սայաթ-Նովայի և արքայազնի՝ Հադպատի վանական համալիրում հանդիպման մասին՝ վստահեցնելով, որ Սայաթ-Նովան ծնվել է 1722 թ.: Ինչպես վերևում արդեն նշվեց, նույն թվականին էր հակված նաև վրացի Կ. Կեկելիձեն, սակայն, ըստ Սևակի «Նրա փաստարկումը զուտ տրամաբանական էր»՝ հիմնված Սայաթ-Նովայի այն նույն տեղեկությունների վրա, որոնցից հանված եզրակացությունը, ըստ տրամաբանության օրենքի, ոչ թե 1712 թվականն է, այլ 1722-ը» (էջ 14): Հեղինակը վերապահումով է մոտենում նույնիսկ սայաթնովագիտության նվիրյալ Մ. Հասրաթյանի թարգմանություններից մեկին, որտեղ «հաբաշու

² Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա: Առաջաբան, Մոսկվա, 1852, էջ 7:

³ Կ. Կեկելիձե, Վրաց գրականության պատմություն, հտ. 2, Թբիլիսի, 1956, էջ 677:

⁴ Գ. Լևոնյան, Սայաթ-Նովա. քննական ուսումնասիրություն, Երևան, 1931, էջ 21:

⁵ Մ. Հասրաթյան, Սայաթ-Նովայի հայերեն մի քանի խաղերի մասին, «Տեղեկագիր ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի», Երևան, 1943, թ. 3, էջ 41-43:

⁶ Պ. Սևակ, Սայաթ-Նովա, Երևան, 1969, էջ 18 (Այսուհետ այս գրքից հղումների էջերը կգրվեն տեքստում) – Չ.Ս.

Հինդուստան» արտահայտությունը գրված է մեծատառով՝ «Հաբաշ-Հինդուստան: «Օգտվելով այս մեծատառից ու գծիկից՝ շատ սայաթնո-վագետներ էլ «հաբաշ»-ը դարձրել են «Հինդուստան»-ին համակշիռ, գծի-կի տեղն էլ դնելով «ու» շաղկապը», - գրում է Սևակը (էջ 21): Ըստ նրա՝ այստեղ խոսքը ոչ թե «Հաբեշտան» տեղանվան, այլ «հաբեշ» ածակա-նի մասին է, որ նշանակում է «սևամորթ, խափշիկ»: Նշենք, որ 1963 թ. ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի հանձնարարությամբ Ա. Քոչոյանի կողմից կազմված «Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բա-ռարան»-ում ներառված է միայն «Հաբաշ» տարբերակը՝ հետևյալ բա-ցատրությամբ՝ հայերեն 10-րդ խաղից մեջբերումով. «Հաբաշ. Հաբեշս-տան, Եթովպիա: Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի»⁷:

Պ. Սևակի աշխատության վրա ակնհայտ է Մ. Հասրաթյանի երկերի ազդեցությունը, որի «...մեծ տաղանդի շնորհիվ՝ այսօր ընթեր-ցողը վայելում է Սայաթ-Նովայի այլալեզու խաղերի թարգմանությու-նը»⁸: Սևակը օգտվել է Մ. Հասրաթյանի կազմած և տարբեր տարիներ-ին հրատարակված ժողովածուներից, բազմաթիվ մեջբերումներ արել նրա հոդվածներից և հարգանքով է խոսել գիտնականի մասին, փորձել լուծումներ գտնել այս թեմայով բազմաթիվ հետազոտություն-ներ կատարած իր ավագ գործընկերոջ առաջադրած խնդիրների լուծ-ման համար: Մ. Հասրաթյանը 1959 թ. վերահրատարակված Սայաթ-Նովայի խաղերի գրքում ներառված կենսագրական ակնարկում շատ գուսպ է արտահայտվել Սայաթ-Նովայի ծննդյան թվականի խնդրի մասին. «Այս հարցում (ընդհանրապես համառոտ այս ակնարկում) բանավեճի մեջ չենք մտնում ոչ մի բանասերի հետ: 1942 թվականին,

⁷ Ա. Քոչոյան, Սայաթ-Նովայի հայերեն խաղերի բառարան, Երևան, 1963, էջ 103:

⁸ Ա. Դոլուխանյան, Մորուս Հասրաթյան: Ինքնության և ժառանգության վավե-րագիրը, Երևան, 2022, էջ 12:

վերլուծելով երգչի հայերեն աղավաղված մի խաղը (51), եկանք այն հաստատ համոզման, որ Մայաթ-Նովան ծնվել է 1717 թվականին»⁹:

Պ. Սևակի ատենախոսության գրախոսականում Մ. Հասրաթյանը կետ առ կետ պատասխանում է Սևակի՝ Մայաթ-Նովայի ծննդյան թվականին և մյուս խնդրահարույց հարցերին առնչվող բոլոր «մեղադրանքներին»: «Բայց որովհետև բանասիրությունը մարդուն երբեմն դնում է որսորդի թուլության մեջ, ոգևորում, խանդավառում է այնքան, որ հյուսիս-հարավը շփոթում է, ժամանակից շուտ կրակում, Պարույր Սևակը ևս չի կարողացել խուսափել դրանից: Օրինակ, նա երկար, շարանով, տասից ավելի փաստեր է բերել, որպեսզի Մայաթ-Նովային դուրս բերի 1722 թ. ծնված»¹⁰: Մ. Հասրաթյանի կատարած անգերազանցելի աշխատանքներից օգտվել են և այսօր էլ շարունակում են օգտվել սայաթնովագիտությամբ զբաղվող բոլոր հետազոտողները, ինչպես, օրինակ, արդի սայաթնովագիտության մեջ Հենրիկ Բախչինյանը, որը Սևակի պես հակված է Մայաթ-Նովայի ծննդյան թվականը ընդունել 1722 թ., կամ անգլիացի հայագետ Չարլզ Դաունսթըրը, որն իր 1997 թ. հրատարակած «Մայաթ Նովա՝ 18-րդ դարի աշուղ» (Sayat-Nova: An 18th century troubadour) աշխատության մեջ խաղերի մեջբերումների թարգմանություններում «...հենվում է 1963-ին Հասրաթյանի հրատարակած Մայաթ-Նովայի խաղերի բնագրերի վրա՝ դրանք համարելով կատարելապես ճշգրտված»¹¹: Դաունսթըր բազմաթիվ մեջբերումներ է անում 1959 թ. և 1963 թ. Մ. Հասրաթյանի Մայաթ-Նովայի խաղերի ժողովածուներից և նրանց առաջաբաններից, իսկ, այն միտքը, (ինչպես ճիշտ նկատել է Բ. Գ. Պ., պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանը), թե Մայաթ-Նովան իր երգերով, արվեստով փորձել է դառնալ հաշտության, համակեցության ու մարդասիրության քարոզիչ, անգլիացի հայագետի մենագրության վերջին մտքերից մեկն է

⁹ Մայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Երևան, 1959, էջ 302:

¹⁰ Մ. Հասրաթյան, Պարույր Սևակի «Մայաթ-Նովա» դոկտորական դիսերտացիայի մասին, «Սյունյաց երկիր», Երևան, 2019, թ. 494, էջ 73:

¹¹ Ա. Դոլուխանյան, Մոդուս Հասրաթյան: Բնքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, 2022, էջ 122:

դարձել: Պ. Սևակը անդրադարձել է նաև Մորուս Հասարթյանի բնորոշմամբ «ճանաչված և անծանոթ» հեղինակներին, որոնք անդրադարձել են Սայաթ-Նովային, որոնցից շատերը «...իրենց նախորդ բանասերների կշիռը թեթևացնելու և իրենց՝ բանասիրական արևի տակ տեղ ապահովելու նպատակով, նրանց դիտողություն են անում, որ այսինչ բանը չեն նկատել...»¹²: Այս դեպքում Պարույր Սևակի գրիչը, մեղմ ասած, դուրս է գալիս քննադատության զուտ գիտական միջավայրից՝ մտնելով անձնական դաշտ և անգամ կոպիտ արտահայտվելով այս կամ այն հոդվածագրի մասին: Մրանում համոզվում ենք աշխատության մեջ առկա տարբեր բանավիճական հատվածներն ընթերցելիս: Օրինակ, նույն թեմայի մասին մենագրության հեղինակը գրում է. «Գալով Հնդկաստանի հարցին՝ հարկավոր է ասել, որ ոմանք Սայաթ-Նովային Հնդկաստանում տեսնելու համար իրենց թույլ են տվել կա՛մ անհիմն հայտարարություններ անել և կա՛մ ընթանալ ընդդեմ գիտական տարրական բարեխղճության (հատկապես Գ. Աբովը)» (էջ 22):

Պ. Սևակի քննության հաջորդ առարկան Սայաթ-Նովայի «սիրեկան յարք»՝ Աննան է: Սևակը չի ժխտում, որ Սայաթ-Նովան «...ոչ միայն բանաստեղծ է, այլև առանձնահատուկ տիպի բանաստեղծ՝ աշուղ-գուսան, որի առաջնահերթ պարտականությունն է երգել սերը առհասարակ և գոգալներին ընդհանրապես» (էջ 38), բայց ըստ նրա, «Սայաթ-Նովային հետագայում հանդիպել է մի մեծ և զանազանվող, այլևս անանց և ողբերգական, կարելի է ասել՝ նույնիսկ ճակատագրական սեր» (էջ 39): Այստեղից հետագոտողը սկսում է Սայաթ-Նովայի խաղերի մեջ փնտրել ու գտնել «Աննա» անունը՝ գաղտնագրված տարբերակներով: Խաղերում գտնելով բազմաթիվ բառեր, որտեղ առկա են Աննա-Անի-Անա անվան հետ կապված տարբեր արմատներ, բացատրելով, թե Սայաթ-Նովան դրանք մտածված է ծածկագրել իր բանաստեղծությունների մեջ՝ Պ. Սևակը ջանասիրաբար

¹² Մ. Հասարթյան, Պարույր Սևակի «Սայաթ-Նովա» դոկտորական դիսերտացիայի մասին, էջ 72:

փորձել է գաղտնագրել նրանք, նույնիսկ բոլոր հանգերում գտնել իր ուզած արմատը: Օրինակ, Մայաթ-Նովայի հայերեն 11-րդ խաղում, ըստ Սևակի, «Աննա» անունը ծածկագրված է գլխավոր հանգակապ բառերի մեջ (լալանին, յարանին, գայանին, մերանին, մասանին), ինչպես նաև սրանց հետ թեջնիսաբար-բառախաղով կամ պարզորեն հանգավորվող բառերի մեջ...» (էջ 40): Սևակը չի զլանում նույնիսկ նշել, թե որ բառը քանի անգամ է կիրառել այս խաղում: Նմանատիպ ծածկագրություններ է գտել նաև հայերեն 65-րդ խաղում, ինչպես նաև վրացերեն երկու խաղերում: «Այդ բանը նա արել է նաև աղբբեջաներեն Խաղերում», - նկատում է Սևակը՝ օրինակ բերելով «Ադանա» բառը. «Ուրեմն 4 քառյականոց մի Խաղի մեջ, ծածկելով հանգերի խաբուսիկության տակ, Մայաթ-Նովան հինգ անգամ ոչ միայն տալիս է իր սիրածի անունը, այլև նույնքան անգամ պարզապես ճշում է. **«Անունն Աննա է»** («Ադ Անա»): Այս հարցի մասին Մորուս Հասրաթյանը գրախոսականում գրում է. «Առավել աններելի եմ համարում այս հոյակապ ուսումնասիրության հեղինակի համար, որ 30 տարի առարկության չհանդիպած, վերստին Աննա անունը հաստատելու, հիմնավորելու նպատակով հայերեն 11-րդ «Յիս կանչում իմ Լալանին» խաղի մեջ 25 անգամ նշած Աննա անուն է հաշվել կամ գտել»¹³: Մ. Հասրաթյանը վերը նշած բառաշարքից ընդունում է միայն Լալանի, յարանի, գալանի, մերանի, մասանի բառերը: «Եթե այդպես է, ապա երգչի բոլոր ոտանավորների մեջ հայ և օտար բառերի միջից, սկզբից, մանավանդ վերջից կարելի է մի քանի հարյուր Անի, Անա հավաքել»¹⁴: Մենք ևս կարծում ենք, որ չափազանցություն է մեկ խաղի մեջ այդքան ծածկագրություն գտնել. դժվար թե հիմնականում բանավոր ձևով, շատ հաճախ հանպատրաստից իր երգի համար խոսքեր հորինող աշուղ Մայաթ-Նովան այդքան կենտրոնանար Աննա անվան ծածկագրության վրա: Մեր ասածը հաստատում է հենց Պարույր Սևակը՝ իր հետազոտության երկրորդ՝ Մայաթ-Նովայի ստեղծագործությանը նվիր-

¹³ Նույն տեղում, էջ 75:

¹⁴ Նույն տեղում:

ված հատվածում գրելով. «Գերազանցապես նա հորինել է մտքի մեջ, առանց թուղթ ու գրչի, հանպատրաստից, անսպասելի առիթներով, մեջլիսներում, հանդիսատեսների սպասողական հայացքների տակ, մրցումների ժամանակ, իր մրցակիցներին տեղն ու տեղը պատասխանելու ստիպվածությամբ» (էջ 160):

«Աննա»-յի հարցը շարունակում է քննել Պ. Սևակը՝ արդեն մանրամասնելով, թե Թեյմուրազի և Հերակլ 2-րդ-ի ժամանակ վրաց արքունիքում ապրած չորս «Աննա»-ներից ո՞րն է Սայաթ-Նովայի «սիրական յարը»՝ Թեյմուրազ թագավորի երկրորդ կին Աննա-խանումը, Հերակլ Երկրորդի քույր Աննան, Հերակլի երկրորդ կին Աննան, թե՛ Հերակլի քույր Աննայի թոռ Աննան: Սևակը անդրադառնում է բոլորին, մանրամասնելով պատմում յուրաքանչյուրի մասին: Շարունակելով քննել Սայաթ-Նովայի ծննդյան թվականի հարցը՝ հեղինակը քարք քարի վրա չի թողնում «Պատմաբանասիրական հանդես»-ում 1966 թ. 3-րդ համարում տպագրված «Ե՞րբ է ծնվել Սայաթ-Նովան» հոդվածի հեղինակ Հ. Սևոյանին՝ 20 էջից ավելի «նվիրելով» վերջինիս 12 էջանոց գրվածքին: «Հոդվածը ծավալվում է ամսագրային ընդամենը 12 էջի վրա, բայց դրա լիակատար հերքումը տալու համար հարկ կլինի երևի գրել առնվազն 120 էջ, որովհետև...» (էջ 94): Հոդվածի հեղինակը փորձել է ապացուցել, թե Սայաթ-Նովան ծնվել է 1726-ին: Սևակը, կրկին խորանալով մանրամասնությունների մեջ, հերքում է այս վարկածը (էջ 94-113), գրելով, թե «Հ. Սևոյանի «Բանասիրությունն» այլ բան չէ, քան հենց Սայաթ-Նովայի բազմաթիվ և անժխտելի վկայությունների հերքում՝ բացարձակապես մտացածին, ոտից գլուխ սարքված մի նյութով» (էջ 95): Ավարտելով իր ուսումնասիրության այս մասը, նոր փաստեր ու ապացույցներ գտնելով՝ Պ. Սևակը մի քանի անգամ պնդում է, թե Սայաթ-Նովան ծնվել է 1722 թ.:

Պ. Սևակի աշխատության երկրորդ հատվածը նվիրված է Սայաթ-Նովայի ստեղծագործությանը: «Ճոխ, հատու և փառավոր լեզվով վեր է հանված Սայաթ-Նովան իր ստեղծագործական տաղանդի, խոր, համամարդկային ապրումների, առատ ու զուլալ զգացումների, նուրբ

գեղագիտական ճաշակի, հոգեկան հարուստ ալեկոծումների, նրա իմաստության, հատու և արթուն ռամիկ մտքի, բարոյական բարձր առաքինությունների և քաղաքացիական քաջության բոլոր կողմերով»¹⁵: Ի տարբերություն ուսումնասիրության առաջին հատվածի, ընդդիմախոս Մ. Հասրաթյանը Սայաթ-Նովայի ստեղծագործության վերլուծությունը և սևակյան մոտեցումը առավել քան հաջողված է համարում՝ նշելով նաև այնտեղ առկա թերություններն ու խորհուրդ տալով հետագայում շտկել դրանք: Այս հատվածում երևում է Սևակի տեղեկացվածությունը համաշխարհային գրականության, պատմության ու մշակույթի մասին: Սայաթ-Նովային և նրա ստեղծագործությունը հեղինակը դիտարկում է 18-րդ դարի աշխարհաքաղաքական իրավիճակների համակենտրոնում, բերում օրինակներ Արևելքի, ավելի հաճախ՝ Արևմուտքի հեղինակներից, նրան համեմատում հունական ռապսոդների, ֆրանսիական տրուբադուրների, գերմանական մայստերզինգերների ու կելտական բարդերի հետ: Այս առումով, ինչպես Մ. Հասրաթյանն է նշում, Սևակը նորարար էր, քանզի իրենից առաջ Սայաթ-Նովայով հետաքրքրված հեղինակները նրա ստեղծագործությունը քննել են հիմնականում արևելյան նմանատիպ ստեղծագործողների համապատկերում: Այս երևույթը Մ. Հասրաթյանը բացատրում է նրանով, որ Սևակը չի սիրում խոսել արդեն իսկ հանրածանոթ հարցերի մասին, այլ «...չասվածի, մոռացության տրվածի, կամ պարզապես չնկատվածի»¹⁶:

Պ. Սևակը նկարագրում է 18-րդ դարի բազմազգ Թիֆլիսը, որտեղ, ինչպես եվրոպացի ճանապարհորդներն են վկայել, 20.000 բնակչությունից 14.500-ը հայերն էին: Պատկերելով արևելքի երկրներում դեռևս շարունակվող դասակարգային տարբերությունները՝ հեղինակը դրան հակադրում է նույն ժամանակներում եվրոպական երկրներում «մարդու իրավունքների պաշտպանությանը» միտված բարեփոխումները: «Մինչ բովանդակ Եվրոպան զբաղված էր «Հասա-

¹⁵ Նույն տեղում, էջ 76:

¹⁶ Նույն տեղում:

րակական դաշինք»-ի և «Օրենքների ոգի»-ի ընթերցմամբ ու վերընթերցմամբ. մինչ իրար հետևից լույս էին տեսնում աշխարհահռչակ «Հանրագիտարան»-ի հատորները և լեսինգյան «Նաթան» էր բեմադրվում, Արևելքում շարունակվում էր ոչ միայն ճորտատիրությունը, այլև դեռ այնքան էր հարգի ստրկավաճառությունը, որ նույնիսկ «ալլաի տեղապահ» սուլթաններն էլ վերջին հաշվով կիսաստրուկներ էին, քանի որ, իբրև կանոն, ծնվում էին ստրուկուհուց...» (էջ 126,127): Արիստոտելից մինչև Բուալո, Հոմերոսից մինչև Շեքսպիր, Վոլտեր, Շիլլեր ու Գյոթե, Տոլստոյ ու Դոստոևսկի, Մահադի ու Հաֆեզ, Նարեկացի, Քուչակ, Նաղաշ Հովնաթան. ուսումնասիրությունը Սայաթ-Նովայի ստեղծագործության մասին է, բայց երևում է, որ հեղինակը քաջաձանոթ է հայ և համաշխարհային, հին, միջնադարյան և նոր գրականության լավագույն հեղինակներին, նրանց ստեղծագործություններին ու գրականագիտական խորդուբորդ ճանապարհներով, հարուստ գիտելիքների պաշարի օգնությամբ է վերլուծում Սայաթ-Նովայի խաղերը: Այնքան ասելիք ունի Սևակը, որ շատ դեպքերում մոլորվում է իր բացած արահետներում և հակասում ինքն իրեն: Այդպիսի օրինակներից մեկը գրախոսության մեջ ներկայացրել է Մորուս Հասրաթյանը՝ կապված Սայաթ-Նովայի ու Քուչակի համեմատությամբ, որտեղ Սևակը խոսում է նաև Վոլտերի մասին, ու երկու էջ դրանից առաջ տրված Քուչակի մասին «ճշմարիտ բանասիրական խոսք ասելուց հետո»¹⁷ մոռանում է իր իսկ արած դիտողությունը: Պ. Սևակի կարծիքով, միայն Արևելքի բնությունից կարելի էր ստանալ այնպիսի ունակություններ, որոնցով հնարավոր էր ականավոր դարձնել առնվազն վեց երջանիկ մարդո՝ երգիչ, նվագաձու, երգաստեղծ-կոմպոզիտոր և երեք բանաստեղծներ, «...որոնցից յուրաքանչյուրը պիտի հպարտություն պատճառեր այն ազգին, որի լեզվով բանաստեղծելիս լիներ» (էջ 121): Իսկ Արևմուտքի բազմալեզու և բազմահարուստ գրականության մեջ Սևակը դժվարանում է գտնել մի այնպիսի երևույթ, ինչպիսին Սայաթ-Նովան է:

¹⁷ Նույն տեղում, էջ 77:

Պ. Սևակն իր ուսումնասիրության մեջ անդրադառնում է նաև Սայաթ-Նովայի խաղերի տաղաչափական առանձնահատկություններին՝ շեշտելով, որ այնտեղ ձևն ու բովանդակությունը, խորքն ու մակերեսը իրար այնպես են սպասարկում, որ այլևս տեղ չի մնում ո՛չ պահանջելիքի, ո՛չ էլ խնդրանքի: Սևակը Սայաթ-Նովայի ստեղծագործական վարպետությունը համեմատում է Շեքսպիրի կատարյալության հետ՝ համարձակորեն բարձրաձայնելով, որ նրանց «...հետնորդները չկարողացան նրանց գերազանցել նաև վարպետությամբ, որովհետև անկարելի է գերազանցել կատարյալը» (էջ 357): Սևակի կարծիքով, Սայաթ-Նովայի «բանեցրած բանաստեղծության տեսակներից պարզագույնն անգամ ավելի բարդ է, քան եվրոպական սոնետը կամ ռոնդոն» (էջ 358): Դրանք այնքան բարդ են, որ եվրոպացին կարող է պարզապես չհավատալ, թե հնարավոր է լուծել նմանօրինակ մեծ ու վսեմ խնդիր ու դեռ «հետև էլ արտահայտել մեծ ու վսեմ մտքեր ու ընթերցողին պատճառել գեղագիտական անկրկնելի վայելք» (էջ 358):

Սևակն իր ուսումնասիրության տարբեր հատվածներում խոսում է նաև Սայաթ-Նովայի մարդկային հատկանիշների մասին՝ ընդգծելով նրա ազնվությունն ու անկեղծությունը, ճշմարտախոսությունը: «Հանճար լինելուց առաջ և լինելու համար պետք է նախ մարդ լինել, ինչպես որ համամարդկային լինելուց առաջ և լինելու համար հարկավոր է նախ լինել մարդկային» (էջ 363), - գրում է նա:

Ուսումնասիրության վերջում Սևակն անդրադառնում է նաև Սայաթ-Նովայի մահվանը՝ պատմելով 1795 թ. պարսից Աղա Մահմադ խանի արշավանքի և ավանդության մասին, թե ինչպես վանական Սայաթ-Նովան Հաղպատից Թիֆլիս է շտապում, միանալով եկեղեցում ապաստանած ժողովրդին և այնտեղ էլ նահատակվում:

Պ. Սևակն իր աշխատությունն ամփոփում է Սայաթ-Նովայի մասին փիլիսոփայական մտածողությանը հատուկ նախադասություններով, որոնք ընդգծում են 18-րդ դարի աշուղ-բանաստեղծի մեծությունը: «Սայաթ-Նովան պատկանում է երե՛ք ժողովրդի, հավասարապես սիրված է երե՛ք ազգից և զարդարում է երե՛ք երկիր: Նա ժողո-

վորդների բարեկամության սոսկական երգիչ չէ, այլ այդ բարեկամության ծնունդն է և այդ բարեկամության մարմնացումը: Քայլո՛ղ բարեկամությունը: Բայց, այս ամենով հանդերձ, Սայաթ-Նովան ազգային է երգիչների չափ... Սայաթ-Նովան սոսկական բանաստեղծ չէ, այլ սահմանագծային բանաստեղծ» (էջ 364, 365):

Եզրակացություն

«Սայաթ-Նովա»-ն հիմնարար աշխատություն էր, ուստի և Պ. Սևակին միանգամից շնորհվեց բանասիրական դոկտորի գիտական աստիճան»¹⁸: «Պարույր Սևակի «Սայաթ-Նովա» աշխատության հրատարակությունից անցել է ավելի քան չորս տասնամյակ, և սակայն վստահորեն կարելի է ասել, որ այն մնում է սայաթնովագիտության չգերազանցված մակարդակը»¹⁹: Նմանատիպ գնահատականները բազմաթիվ են այս աշխատության մասին: Սևակն այսքանով չի բավարարվել: Նա շարունակել է ուսումնասիրությունները Սայաթ-Նովայի վերաբերյալ, ձեռնարկել է գրել «Սայաթ-Նովան և հայ միջնադարը» աշխատությունը, որը, ցավոք անավարտ է մնացել:

Պ. Սևակի «Սայաթ-Նովա»-ն սայաթնովագիտության մեջ կարևոր նշանակություն ունի: Ճիշտ է, ուսումնասիրության շատ հատվածներում նրա հանրաճանաչ հեղինակը դուրս է եկել գիտական ընդունված չափանիշներից, լիրիկական շեղումների մեջ է ընկել, կոպիտ դիտարկումներ արել այլ հետազոտողների մասին, բայց, միևնույն է, այն բացառիկ է իր տեսակի մեջ և, ինչպես նշել է նրա ընդդիմախոս Մ. Հասրաթյանը, այն շքեղ, խոր գրաքննադատական ուսումնասիրություն է, «...որին գերազանցողը պետք է ընդհանրապես գերազանցի Պարույր Սևակին»²⁰:

¹⁸ Մ. Ղազարյան, Պարույր Սևակի «Սայաթ-Նովան և հայ միջնադարը աշխատությունը», «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», Երևան, 2012, թ. 136.1, էջ 9:

¹⁹ Մ. Սարինյան, Պարույր Սևակի «Սայաթ-Նովան», «Գրականագիտական հանդես», Երևան, 2013, հո. ԺԴ., էջ 66:

²⁰ Մ. Հասրաթյան, Պարույր Սևակի «Սայաթ-Նովա» դոկտորական դիսերտացիայի մասին, էջ 80:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ էջ 4

ПРЕДИСЛОВИЕ էջ 5

FOREWORD էջ 6

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ

Պարույր Սևակը գրականագետ և գրաքննադատ.

բանահյուսություն և միջնադարյան հայ գրականություն..... էջ 7

ԱՇՈՏ ԳԱԼՍՅԱՆ

Պարույր Սևակի «Անցյալը ներկայացած»

ինքնակենսագրության լեզվական հիմքերը..... էջ 21

ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Պարույր Սևակի «Երգ երգոց» պոեմը և

Աստվածաշունչը..... էջ 27

ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ

Պարույր Սևակի «Եվ այր մի՝ Մաշտոց անուն» պոեմը..... էջ 41

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ

Պարույր Սևակը հրապարակախոս..... էջ 54

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի

տպագրության պատմությունը..... էջ 69

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐԳՍՅԱՆ

Պարույր Սևակի «Սայաթ-Նովա» աշխատությունը..... էջ 77

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

Հոդվածների ժողովածու

Ստորագրված է տպագրության :
Չափսը՝ Թուղթը՝ օֆսեր:
Տպագրությունը՝ օֆսեր: տպ. մամուլ:

«ԳԵՎՈՐԳ - ՀՐԱՅՐ» ՍՊԸ
Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52-79-74
Էլ. փոստ lusakn@rambler.ru

ISBN 978-9939-968-44-5



9 789939 968445